

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

«Կորուպցիան» Ողջ Ու Առողջ

Նախ յայտնենք, որ «Կորուպցիա» օտար բառը կը գործածենք, քանի որ այս բառի երկու հայերէն հոմանիշները՝ կաշառակերութիւնը եւ փտախտը, չունին նոյն բովանդակութիւնը եւ հնչեղութիւնը: «Կորուպցիա» շատ աւելի ընդգրկուն է քան պարզ կաշառակերութիւնը եւ կը վերաբերի բարձրաստիճան պաշտօնեաներու կողմէ կատարուող գողութիւններուն ու չարաշահումներուն:

Հայաստանի իրարայացորդ կառավարութիւնները միշտ ալ յայտարարած են «Կորուպցիա» դէմ պայքարելու իրենց վճռականութեան մասին ու խօսած են այդ ուղղութեամբ արձանագրուած յառաջխաղացքի մասին:

Սակայն, վերջերս իրապարկուած տեղեկութիւն մը եկաւ անգամ մը եւս փաստելու, որ «Կորուպցիա» դէմ պայքարը խօսքի սահմաններէն անդին չանցնիր եւ աւելին անոնց հեղինակները կ'արժանանան ամենէն բարձր մակարդակի պաշտպանութեան:

Անցեալ տարուայ Ապրիլին, միջազգային մասնուրը լայնօրէն անդրադարձաւ «Փանամայի Փաստաթուղթեր» անուամբ ծանօթ «սկանտալին»: Գաղտնագերծուած փաստաթուղթերուն մէջ յիշուած էին ապօրէն միջոցներով ձեռք ձգուած եւ Փանամայի մէջ պահ դրուած գումարներու իսկական տիրերու անունները: Ատրայէճանի եւ Ռուսաստանի նախագահներու կողքին կար նաեւ Միհրան Պողոսեանի անունը, որ մինչ այդ կը վարեր Հայաստանի ԴԱՀԿ-ի պետի պաշտօնը եւ որու գլխաւորած կառոյցին վստահուած էր դատարաններու առած որոշումները գործադրութեան դնելու պարտականութիւնը: Պողոսեանի անուն շուրջ յառաջացած մեծ աղմուկը ստիպեց իշխանութիւններուն, զինք հեռացնելու պաշտօնէն, միաժամանակ քննութիւն բանալով՝ ստուգելու համար անոր կուտակած հարստութեան աղբիւրը:

Վերջերս պաշտօնապէս յայտարարուեցաւ որ, այդ քննութիւնները դադարած են, քանի որ Զուլիգերիա մերժած է գործակցիլ ու անհրաժեշտ փաստաթուղթերը տրամադրել հայկական կողմին: Սակայն, զուլիգերիական կողմէ կը յայտնէ որ, Հայաստանի կողմէ իրենց ներկայացուած դիմումները պատշաճ ձեւով չեն լրացուած: Այսպիսով կասկած կը յառաջանայ, թէ արդեօ՞ք դիտաւորեալ եղած են այդ բոլորը՝ «Պողոսեանի» էջը փակելու համար:

Այժմ կը յայտնուի որ, Միհրան Պողոսեան կը պատրաստուի մասնակցելու յառաջիկայ խորհրդարանական ընտրութիւններուն՝ ՀՀԿ-ի ցուցակով: Այսպիսով կրնանք ըսել, որ «Կորուպցիա» յաղթահարման մասին լուրերը խիստ չափազանցուած են ու Հայաստանի մէջ այդ արատաւոր երեւոյթը կը մնայ ողջ ու առողջ:

«ՄԱՍԻՍ»

Եւրոպական Յանձնաժողովի Նախագահը Հրապարակաւ Ծաղրած է Ալիւիին

Եւրոպական Յանձնաժողովի նախագահ՝ Ժան-Գլոդ Եռնկեր Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիւիի հասցէին ըրած իր մէկ կատակով ակնարկած է այդ երկրի հետ Եւրոպական Միութեան դժուար յարաբերութիւններու մասին:

«Շնորհակալութիւն, Ձեզի լաւ օր կը մաղթեմ», - փետրուար 6-ին Պրիւքսէլի մէջ կայացած մամուլի ասուլիսի աւարտին, լրագրողներուն դիմելով, ըսած է Եռնկեր՝ աւելցնելով. - «Իսկ ես այժմ կ'երթամ Ատրպէյճանի նախագահի հետ հանդիպման, այնպէս որ օրուայ լաւ մասը արդէն աւարտած է»:

«Ռոյթըր» մամուլի գործակալութեան հետ զրոյցի ընթացքին Ատրպէյճանցի պաշտօնեաները չեն մեկնաբանած Ժան-Գլոդ Եռնկերի խօսքերը: Ատրպէյճանի նախագահի խօսնակը, սակայն, ըսած է, որ Եռնկեր եւ Ալիւի քննարկած են ուժանիւթի եւ տնտեսութեան ոլորտներուն մէջ համագործակցութիւնը, իսկ Եւրոպական Յանձնաժողովի նախագահը կարեւոր նկատած է մարդու իրաւունքներու եւ հիմնարար ազատութիւններու

պաշտպանութեան հարցը: Իլհամ Ալիւի Պրիւքսէլ եկած է Ատրպէյճան - Եւրոպական Միութիւն յարաբերութիւնները, մասնաւորապէս՝ Ատրպէյճանական կազմը Եւրոպա հասցնելու նպատակով կառուցուելիք նոր խողովակներու հարցը քննարկելու նպատակով:

Իլհամ Ալիւի այցելութեան առաջ, իրաւապաշտպան աւելի քան եօթը տասնեակ կազմակերպութիւններ համատեղ նամակով դիմած էին Եւրոպական Միութեան պաշտօնեաներուն, կոչ ընելով անոնց՝ Ալիւիին յստակ եւ ընդարձակ բարեփոխումներու պահանջներ ներկայացնելու՝ ժողովրդավարութեան ոլորտներուն մէջ:

Այս առթիւ յայտնի դարձաւ նաեւ, որ Ալիւի չեղեալ յայտարարած է հանդիպումը Եւրոպական խորհրդարանի ղեկավար Անտոնիո Տանտիի հետ, քանի որ Եւրոպական Միութեան օրհնադիր մարմինը յատուկ քննարկում կը կատարէ Ատրպէյճանի մէջ մարդու իրաւունքներու խախտումներուն վերաբերեալ:

Պեյլառուսի Գերագոյն Դատարանի Որոշումէն Ետք, Ալեքսանտր Լափշին Յանձնուեցաւ Ատրպէյճանին



Լրագրող Ալեքսանտր Լափշին

Փետրուար 7-ին, Պեյլառուսի գերագոյն դատարանը մերժեց «Ինթընէթի» լրագրող Ալեքսանտր Լափշինի բողոքը՝ այդպիսով հաստատելով Ատրպէյճանին յանձնուած մասին նախկին որոշումները: Նոյն օրն իսկ Լափշին յանձնուեցաւ Ատրպէյճանին:

Ռուսիոյ եւ Իսրայէլի քաղաքացի հանդիսացող Լափշին բողոք ներկայացուցած էր ընդդէմ դատախազութեան որոշման, ըստ որուն, Լափշին պէտք է արտա-յանձնուի Ատրպէյճանին:

Գերագոյն դատարանը Պեյլառուսի դատական համակարգի վերջին ատենն է, որուն վճիռները չեն կրնար բողոքարկուիլ:

Շաբ.ը էջ 4

Որոշուած է Նկարահանում Ապահովել Միայն 1500 Ընտրատեղամասերու Մէջ

Հայաստանի Կենդոնական Ընտրական Յանձնաժողովի արտահերթ նիստին որոշուած է Ազգային ժողովի ընտրութիւններու ժամանակ քուէարկութեան ընթացքին եւ քուէարկութեան արդիւնքներուն ամփոփման գործընթացի տեսանկարահանում եւ միաժամանակեայ համացանցային հեռարձակում կատարել:


Ապրիլ 2-ին ընտրութիւններու ընթացքին ուղիղ հեռարձակում եւ նկարահանում կ'ապահովուի Եւրամիութեան ֆինանսական աջակցութեամբ: Այս հարցով ստեղծուած ընդդիմադիրներու եւ իշխանութեան ներկայացուցիչներու յանձնաժողովը որոշած էր՝ բաւարարուելով եղած ֆինանսական միջոցներով, նկարահանում ապահովել ոչ թէ բոլոր շուրջ 2000, այլ առնուազն 1500 ընտրատեղամասերու մէջ, այսինքն 500 ընտրատեղամասեր կը մնան առանց նկարահանման:

Ի Յայտ Եկած Են Օսմանեան Փաստաթուղթի Հայ Որբերու Իսլամացման Վերաբերեալ

Հայոց ցեղասպանութեան ժամանակ օսմանեան կառավարութիւնը գործադրութեան դրած է նաեւ հայ կանանց ու երեխաներու մէկ մասը թրքացնելու եւ իսլամացնելու քաղաքականութիւն, ինչ որ եւս պէտք է դիտուի Յեղասպանութեան ընդհանուր պատկերին մէջ:

Բռնի իսլամացումը հայ կանայք եւ երեխաներ թէեւ փրկուած են գուտ ֆիզիքապէս, սակայն որպէս ազգ՝ ոչնչացուած են:

Այս մասին անդրադարձած է «Ալիւնք» կայքէջը, հրապարակելով երկու օսմանեան փաստաթուղթեր եւ անոնց արեւմտահայերէն թարգմանութիւնները՝ Անգարայի շրջանին մէջ գտնուող շէնքի մը մէջ հաւաքուած հայ որբերու մասին:



Վերջերս ի յայտ եկած Օսմանեան փաստաթուղթի հայերէն օրինակը

մօտ: Իսկ երկրորդ փաստաթուղթը, այդ հրահանգի պատասխանն է՝ տրուած Անգարայի փոխնահանգապետ Աթիֆի կողմէ, ուր ան որոշմանրամասնութիւններ կը հաղորդէ այդ շրջաններուն մէջ գտնուող հայ կանանց եւ երեխաներու թիւերու մասին եւ կը յայտնէ, որ հայ մանուկները կը բաժնուին իսլամական կազմակերպութիւններուն:

Այս փաստաթուղթերը օսմանեան արխիւներուն մէջ գտած, արեւմտահայերէնի թարգմանած եւ Akunq.net-ին տրամադրած է ամենիկաբնակ պոլսահայ ուսումնասիրող՝ Գէորգ Յակոբեանը:

Սերժ Սարգսեանից Նեղացածները Իշխանութիւնները Լուրջ Խնդրի Առաջ Են Կանգնած

ԱՐՄԱՆ ԳԱԼՈՅԵԱՆ

Իշխանութեան ներսում հետաքրքիր վերադասաւորումներ են սկսուել: Սերժ Սարգսեանի կողքից հերթով հեռանում են այն գործիչները, որոնք այս տարիներին համարուել են իշխանութեան յենաստիակները, որոնք գործուն աջակցութիւն են ցուցաբերել Սերժ Սարգսեանին նախագահի պաշտօնը զբաղեցնելու հարցում 2008թ. ընտրութիւններում ընտրակեղծիքների իրականացման ժամանակ, Մարտի 1-ի արիւնալի իրադարձութիւնների ընթացքում, երբ արդիւնքում եղաւ 10 զոհ: Այդ անձինք Սերժ Սարգսեանին աջակցել են նաեւ յետոյ՝ նրա իշխանութեան վերաբարտադրութեանը յաջորդող բոլոր ընտրութիւններում: Սակայն Սերժ Սարգսեանը յանուն սեփական իշխանութեան պահպանման ու վերաբարտադրման, ճանապարհին գոհաբերել է թիմակիցներին: Ճիշդ է՝ ՀՀԿ խորհրդի վերջին նիստում Ս. Սարգսեանին իր կուսակիցներին դիմելով՝ ասել էր. «Նեղացածներ չպետք է լինեն»: Սակայն նրա գործելաոճին հետեւելով՝ դժուար է պատկերացնել՝ ինչպէ՞ս կարող է նեղացածներ չլինեն: Նշենք, որ զարմանալի «գուզադիպութեամբ» միջոցառումները, որ Ս. Սարգսեանի թիմի նեղացուածութեան պատճառ են դարձել հիմնականում առնչուել են Սերժ Սարգսեանի յայտնի փեսայի՝ Միքայէլ Մինասեանի հետ: Նա այս ընթացքում փորձել է անկատ

կերպով իշխանութիւնից հեռացնել «հերին» իբր վարկաբեկուած անձանցից ազատուելու պատրուակով՝ փոխարէնը տեղ բացելով իր ընկերների, թիմակիցների համար: Արտաքուստ, միգրացի, նրա քայլերը ոմանց թուացել են դրական, երբ վարկաբեկուած մարդկանց փոխարինելու են բերել երիտասարդներին, բայց սա միայն առաջին հայեացքից, քանի որ իրենց արժէ-համակարգով «ծելլած մագերով, օսլայած օձիքով» երիտասարդները չեն տարբերուել նախորդներից, պարզապէս նրանք տարիքի բերումով դեռ չեն հասցրել անել այն, ինչ արել են մեծերը: Ինչեւէ: Ս. Սարգսեանից նեղացածների շարքը կարելի է երկար թուարկել: Այս առումով ամենաթարմ օրինակն Աժ նախկին նախագահ, ՀՀ նախկին վարչապետ Յովիկ Աբրահամեանի հեռանալն է ՀՀԿ-ից: Բաւական է միայն թուարկել վերջին 20 տարում Աբրահամեանի զբաղեցրած պետական ու կուսակցական պաշտօնները, պարզ կը դռնայն, թէ ով էր նա ՀՀԿ-ի եւ իշխանութեան համար, ինչ կշիռ, ինչ դեր ու նշանակութիւն ունէր այնտեղ. եղել է տարածքային կառավարման նախարար-փոխ-վարչապետ, Աժ նախագահ, վարչապետ, ՀՀԿ-ի, Սերժ Սարգսեանի, սահմանադրական փոփոխութիւնների «Այո»-ի նախընտրական շտաբների պետը: Հ. Աբրահամեանը եղել է նաեւ 2008թ. Մարտի 1-ին նախագահականում գործող շտաբի անդամներից մէկը. իրա-

դարձութիւն, որից յետոյ Սերժ Սարգսեանը յայտնուեց նախագահի պաշտօնին: Ու չնայած այս ամէնին՝ Ս. Սարգսեանը խորհրդարանական ընտրութիւններին ընդունա՞լ՝ հասարակական դժգոհութիւնները մեղմելու նպատակով գոհաբերեց Աբրահամեանին՝ ստիպելով նրան հրաժարական ներկայացնել: Աւելի վաղ Աբրահամեանը ստիպողաբար հրաժարական ներկայացրեց Աժ նախագահի պաշտօնից՝ նշանակուելով վարչապետ, եւ նրա առաջ խնդիր էր դրուած լեզու գտնել խորհրդարանական ընդդիմադիր քառակի հետ, որի առանցքային դերակատարներից մէկն էլ ինամին էր՝ Գ. Ծառուկեանը: Ի դէպ, Սերժ Սարգսեանի եւ Յովիկ Աբրահամեանի միջեւ լարուած յարաբերութիւնները նոր չեն, այլ վերջին մի քանի տարիներին այն ակնյայտ զգացուած էր: Ս. Սարգսեանի կողքին չէ նաեւ պաշտպանութեան նախկին նախարար Սէյրան Օհանեանը, որ 2008թ. Մարտի 1-ին ՀՀ ԶՈՒ գլխաւոր շտաբի պետն էր, իսկ յետոյ 8 տարի շարունակ եղել է ՀՀ պաշտպանութեան նախարարը: Այսօր Ս. Օհանեանն այլեւս իշխանութեան մաս չէ. նախորդ տարուայ աշնանը կառավարութեան փոփոխութիւնից յետոյ նա մերժել էր նոր պաշտօններ ստանալու առաջարկները, փոխարէնը որոշ ժամանակ անց յայտարարեց քաղաքական գործընթացներին մասնակցելու մասին, ընդ որում, նա պատրաստուած է գլխաւորել ընդ-

դիմադիր կուսակցութիւնների դաշինքը: Իշխանութիւնից վաղուց հեռացել է նաեւ 2008թ. Մարտի 1-ի օրերին ՀՀ ոստիկանապետ Հայկ Յարութիւնեանը: Այսօր առաջուայ ինքնամուտաց նուիրումով Սերժ Սարգսեանի կողքին չեն տրանսպորտի եւ կապի նախկին նախարար Գագիկ Բեգլարեանը, Ռուբէն Հայրապետեանը, Մհեր Սեդրակեանը, Սուրիկ Խաչատրեանը, Լեւոն Սարգսեանը՝ Ալրաղացի Լիովիկը: ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկեանը եւս տարիներ շարունակ եղել է իշխանութեան հենաստիակներից մէկը. բայց յիշում էք, թէ Ս. Սարգսեանն ինչպէս ստիպեց նրան փակել քաղաքական էջը, յիշում էք 2015թ. Փետրուարին ՀՀԿ խորհրդի նիստում Ծառուկեանի հասցէին Ս. Սարգսեանի հնչեցրած յայտարարութիւններն ու դրան յաջորդած ռեպրեսիւաները: Հիմա Ծառուկեանը վերադարձել է քաղաքականութիւն: Սերժ Սարգսեանից նեղացած է նաեւ ՀՀ նախկին վարչապետ Տիգրան Սարգսեանը, որը թէեւ հիմա ԵՏՄ-ում բարձր պաշտօն ունի, բայց հազիւ թէ մոռացած լինի, թէ ինչպէս Ս. Սարգսեանին իրեն մի քանի անգամ դարձրեց քառութեան նոխազ՝ սեփական իշխանութիւնը փրկելու համար: Այսօր Ս. Սարգսեանի կողքին չէ նաեւ ՎՊ նախագահ Իշխան Զաքարեանը, որը դարձել է «Ծառուկեան» դաշինքի շտաբի պետը: Ժամանակին Ս. Սարգսեանը շատ տգեղ վարուեց Զաքարեանի հետ, երբ նախագահականում խորհրդակցութեան ժամանակ նախատել էր ՎՊ նախագահին՝ պետական հիմնարկներում ստուգումների արդիւնքում բացառապատմանը եւ դրանց վերաբերեալ հնչեցրած գնա-

Քաղաքական Կոմերցիայի Գրոսմայստերները

ՄԱՐԿ ՆՇԱՆԵԱՆ

Իշխանական համակարգում հիմնական դերաբաշխումը կարծես թէ աւարտուած է: Ըստ այդ դերաբաշխման՝ վարչապետ Կարէն Կարապետեանը պիտի առանձնապէս չխառնուի ներքաղաքական գործընթացներին ու զբաղուի բացառապէս ֆինանսատնտեսական խնդիրներով, այսինքն՝ միջազգային կառույցներին ցոյց տայ, որ լրջօրէն զբաղում է կուռուպցիայի դէմ պայքարով, փորձի կարգուկանոն հաստատել պետական կառավարման համակարգում ու որտեղ պէտք է՝ «պտտակները ձգել», Ռուսաստանի հայ մեծահարուստներից «ներդրումներ բերի» եւ այլն:

Դրան գուզահեռ՝ Սերժ Սարգսեանը պիտի առաջիկայ ընտրութիւններում յայտնի մեթոդներով ապահովի ՀՀԿ-ի յաղթանակը: Այդ թուում՝ նաեւ այն նոյն կրիմի-նալի ու կուռումպացուածների միջոցով, որոնց դեմ իբր պայքարում է վարչապետը:

Մի խօսքով՝ Կարէն Կարապետեանն այս բեմականացման «դրական կերպարն» է, Սերժ Սարգսեանը՝ «բացասականը»: Ճիշդ եւ ճիշդ յայտնի անեկդոտի պէս: Մոսկուայի մետրոյի կայարաններից մէկի դիմաց երկու մուրացկաններ են նստած, մէկի առջեւ գրութիւն կայ՝ «օգնէք խեղճ հրեային», միւսի առջեւ՝ «օգնէք խեղճ ռուսին»: Անցորդներն արհամարհանքով նայում են հրեայի կողմը, որորմութիւն տալիս ռուսին ու ինքնագոհ հեռանում: Անցորդներից մէկն ի վերջոյ չի դիմանում,

մօտենում է հրեային ու խորհուրդ տալիս նոյնպէս որպէս ռուս ներկայանալ: Սրա հեռանալուն պէս հրեան դիմում է «ռուսին», «լսեցի՞ր, Աբրահամ, այս ռուսները որոշել են մեզ կոմերցիայի դասեր տալ»:

Ոչ Սերժ Սարգսեանը, ոչ Կարէն Կարապետեանը քաղաքական կոմերցիայի դասերի կարիք չունեն: Նրանք իրենք ում ասես դասեր կտան ու այդպէս էլ անում են՝ մասների վրայ «ֆուտպոնտով» բոլորին, այդ թուում՝ նաեւ իրենց երբեմնի ու ներկայ թիմակիցներին: Բայց սա, իհարկէ, չի նշանակում, թէ նրանք իրենց մղումներում անկեղծ չեն: Կարէն Կարապետեանն, օրինակ, հաստատ անկեղծօրէն ցանկանում է Ռուսաստանի «հայկական շրջանակներից» 300 միլիոն տոլարի ներդրումներ բերել Հայաստան, որովհետեւ վիճակն իսկապէս ծանր է, ու եթէ դրական փոփոխութիւններ չլինեն՝ կուժն ու կուլան իր գլխին են ջարդուելու: 2016 թուականի տուեալներն ամփոփուեցին, ու խայտառակ պատկեր ստացուեց՝ տնտեսական աճը համարեա զրոյական է, պաշտօնական տուեալներով՝ երկրից արտագաղթել է 54 հազար մարդ, պետութեան պարտքն էլ աւելանում է օրական 1,5 միլիոն տոլարով: Ու Կարէն Կարապետեանը գոնէ իշխանական համակարգում իր դիրքերի ամրապնդման համար պիտի ձգտի ոչ միայն Ռուսաստանից ներդրումներ բերել, այլեւ իր անձնական միջոցները ներդնել (ինչպէս խոստացել է Գիւմրիի դէպքում):

Բայց հարց է ծագում՝ արդեօք հնարաւոր կը լինի դրսից 300

միլիոն տոլար բերել մի երկիր, որտեղից ամէն տարի ապօրինի ճանապարհով դուրս է բերում առնուազն հինգ անգամ աւելի շատ՝ մօտ 1,5 միլիարդ տոլար, եւ որտեղից ամէն տարի արտագաղթում է բնակչութեան 2 տոկոսը: Եթէ Հայաստանում 300 միլիոն տոլար ներդնելու տեղ կայ, ինչո՞ւ է ամէն տարի 1,5 միլիարդ տոլար դուրս բերում երկրից: Կարէն Կարապետեանը կարո՞ղ է պատասխանել այս հարցին: Թէ՞ «էլիտան պիտի փոխուի» ասելով նա հենց դա նկատի ունէր՝ Հայաստանում ապօրինի հարստացածները պիտի ամեն ինչ վերցնեն ու հեռանան, իսկ նրանց փոխարէն Ռուսաստանից պիտի նորերը գան: Այդպէս չի լինում, որովհետեւ եթէ համակարգն այնպիսին է, որ յաջողակ պիտի անել հնարաւոր է միայն իշխանութիւնների հետ կիսուելով՝ ի՞նչ տարբերութիւն, թէ որտեղից են գալիս ներդրումները: Ինչ ներդրում էլ արուի՝ դրանից միայն Սերժ Սարգսեանն ու իր շրջապատն են շահելու, իսկ հասարակութեան համար ոչինչ չի փոխուելու: Ծատ-շատ՝ կարող է հոսանքն էժանանալ 1,2 դրամով:

Ի վիճակի՞ է արդեօք Կարէն Կարապետեանը փոխել այս համակարգը: Իհարկէ ի վիճակի չէ, որովհետեւ ոչ քաղաքական յենարան ունի, ոչ ուժային լծակներ: Եթէ ի վիճակի էլ լինէր՝ հազիւ թէ աներ, որովհետեւ կոմերցիայի տեսանկիւնից ձեռնտու է: Ծատ էլ՝ որ «էս հայերը» որոշել են նրան ու Սերժ Սարգսեանին կոմերցիայի դասեր տալ:

«ԶՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

Շար.ը էջ 18



ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ՝
 ՍՈՏԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՁԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
 ՎԱՅԷԱՋԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$100.00 (First Class)
 Canada \$125.00 (Air Mail)
 Overseas \$250.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
 at Pasadena CA.
 Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մերժուած է Պաշտօնեաներու Ունեցուածքով Չբաղող Յանձնաժողով Ստեղծելու Առաջարկը

Թէեւ Ազգային ժողովի 6 խմբակցութեան 5-ը կողմ էին, որ Նիկոլ Փաշինեանի առաջարկով Բարձրաստիճան պաշտօնեաներու եկամուտներու ու ունեցած գույքի համապատասխանութիւնը ստուգող ժամանակաւոր յանձնաժողով ստեղծելու հարցը քննարկուի խորհրդարանին մէջ, սակայն որոշումը չընդունուեցաւ՝ իշխող Հանրապետականի ջանքերով:

Մինչ քուէարկութիւնը փաշինեան ներկայացուց ինչ աշխատանք պէտք է կատարէ այդ յանձնաժողովը: Հիմա պաշտօնեաները պարտաւոր են յայտարարագրել իրենց ունեցուածքը, սակայն որեւէ մէկը չստուգեր, որքանով յայտարարագրերը կը համապատասխանեն իրականութեան: Բացի այդ, յայտարարագրումէն դուրս կը մնան պաշտօնեաներու հետ փոխկապակցուած անձինք՝ բազմաթիւ հարազատներ ու բարեկամներ, ինչպէս նաեւ անոնց արտասահմանեան գործարքները, օֆշորային ընկերութիւններն ու հաշիւները:

Պատգամաւորը ըսաւ, «Հայաստանի Հանրապետութեան ժողովրդից գողացուած օրէնքով, միջազգային կոնվենցիաներով, մարդու իրաւունքների սահմանուած եւ համապատասխանող ձեւով պէտք է վերադարձուի ժողովրդին, բայց դա պէտք է տեղի ունենայ առանց վեճերի, առանց գիլտորհներ, առանց կախաղանների»:

ՀՀ-ն կը կարողանայ Ձայներու Մեծամասնութիւնը Ստանալ Գալիք Ընտրութիւններուն

Այսօրուս դրութեամբ ՀՀ-ն հնարաւորութիւն ունի գալիք ընտրութիւններուն ձայների մեծամասնութիւն հաւաքել: Այս մասին փետրուարի 6-ին, մամուլի ասուլիսի ժամանակ ասել է ՀՀ պատգամաւոր Սուքիաս Աւետիսեանը:

Նրա խօսքով, քանի դեռ չեն ձեւաւորուել վերջնական դաշինքները, սխալ է վստահ կանխատեսումներ անելը: «Յաւոք դաշինքների մեծ մասը ձեւաւորուած է ոչ թէ միասնական գաղափարախօսութեան հիմքով, այլեւ տարբեր գաղափարախօսութիւններ կրողները մէկ դաշինքում են յայտնուած: Երբ



Աժ պատգամաւոր Նիկոլ Փաշինեան

ԲՀԿ խմբակցութեան ղեկավար Նաիրա Զօհրապեան եւս կողմ արտայայտուեցաւ գաղափարին:

Իշխանութեան մաս կազմող Դաշնակցութիւն խմբակցութեան քարտուղար Աղուան Վարդանեանի խօսքով՝ իրենք կողմ պիտի քուէարկեն հարցին քննարկման հնարաւորութիւն տալու համար:

Հանրապետական խմբակցութեան ղեկավար Վահրամ Պաղտասարեան ըսաւ. «Մենք չենք ուզում ձեւական որեւէ բնութիւն յետեւից ընկնել եւ իրօք այս բարելուծման արդիւնքում մենք սա կը թողնենք յաջորդ Ազգային ժողովին, որպէսզի նորից անդրադառնանք այս թեմային: Հայաստանի Հանրապետական խմբակցութիւնը դէմ է նման ձեւական երեւոյթներին եւ մենք դէմ ենք քուէարկելու»:

նրանք կը յայտարարեն իրենց ծրագրերի մասին, այդ ժամանակ հնարաւոր կը լինի մտածել այն մասին՝ արդեօք «Հանրապետական» կուսակցութիւնը լուրջ մտաւախութիւններ կ'ունենայ, թէ ոչ», - նշել է Աւետիսեանը:

Պատասխանելով ընտրակաշառքի չափերի աւելացման մասին հարցին, մանաւանդ ՀՀԿ կողմից, պատգամաւորն ասել է. «Ես առաջին անգամ ձեզից եմ լսում այս մասին: Մենք աշխատում ենք արդէն մէկ ամսից աւել ու նման խօսակցութիւններ մեր կառուցներում չեն եղել: Ես չգիտեմ, որտեղից են այդ խօսակցութիւնները»:

Ընտրութիւններուն Օրը Փոխելու Կոնգրեսի Նախաձեռնութեան Միացած է 17 Պատգամաւոր

Աժ ՀԱԿ խմբակցութեան՝ ընտրութիւններու օրը փոխելու նախաձեռնութեան միացած է 17 պատգամաւոր: Այս մասին լրագրողներուն ըսաւ ՀԱԿ խմբակցութեան քարտուղար Արամ Մանուկեան: Ըստ պատգամաւորին Աժ-ի «մարդ չկայ», այդ պատճառով ալ քիչ են ստորագրութիւնները:

Արամ Մանուկեան ըսաւ, որ իրենց ժամանակը սուղ չէ, ընտրութիւններու օրը փոխելու համար վաղն ալ ստորագրութիւն կը հաւաքեն պատգամաւորներէն: Ան ըսաւ, որ խոստումներ կան որոշ պատգամաւորներու կողմէ, որ կը միանան դիմումին: Անհրաժեշտ 27 ստորագրութիւնները հաւաքելէ յետոյ ՀԱԿ կը դիմէ ՄԴ՝ խորհրդարանական ընտրութիւններուն օրը փոխելու հարցի քննարկման համար: Ստորագրած պատգամաւոր-

ներու շարքին են Հրանդ Բագրատեան, ՀԱԿ խմբակցութեան միւս անդամները, Համախմբում կուսակցութեան պատգամաւորները՝ Վարդան Օսկանեանի գլխաւորութեամբ, ԲՀԿ-էն Նաիրա Զօհրապեան, Վահէ Էնֆիաճեան, Միքայէլ Մելքոնեան, միացած է նաեւ Թեւան Պողոսեան:

Նշենք, որ որոշ ընդդիմադիր ուժեր կը պահանջեն փոխել ընտրութիւններու օրը՝ նկատելով, որ այն պէտք է նշանակուի Ապրիլի 20-էն յետոյ:

Այս առնչութեամբ պարզաբանամբ հանդէս եկած է ՀՀ կառավարութեան աշխատակազմի ղեկավար-նախարար Դաւիթ Յարութիւնեանը, նշելով, որ Աժ ընտրութիւններուն ամբողջ գործընթացը պէտք է կազմակերպուի Ապրիլի 1-էն 11-ը:

Խոշոր Ներդրողներու Վճարած Զարկերը Պակասած Են Անցեալ Տարի

Պետեկամուտներու կոմիտէի հրապարակած խոշոր հարկատուներու ցանկէն պարզ դարձած է, որ խոշորագոյն առաջին տասնհինգ ընկերութիւնները գրեթէ 4 միլիարդ դրամ պակաս հարկ մուծած են 2016-ին, քան 2015-ին:

Նշուած տասնհինգ ընկերութիւններու կշիռը հայաստանեան տնտեսութեան մէջ՝ վճարած հարկերը ողջ հարկային մուտքերու աւելի քան 20 տոկոսն են:

Յայտնի «Ալէքս գրիգ» ընկերութիւնը, որ, ըստ լրատուամիջոցներու, կը պատկանի Ազգային ժողովի պատգամաւոր Սամուէլ Ալեքսանեանի ընտանիքին, ինչպէս նաեւ Ալեքսանեանին պատկանող «Նատալի ֆարմ»-ը, «Ֆլէշ» ընկերութիւնը, որ գործարքի, տիգրիս-ուռիքի շուկային մէջ գերիշխող դիրք ունի, «Քեթրին կրուփ» ընկերութիւնը աւելի պակաս հարկ վճարած են:

Հայաստանի Պետեկամուտներու կոմիտէի նորանշանակ նախագահ Վարդան Յարութիւնեան խոստովանեցաւ. «Ես, լինելով գործարար աշխարհից եկած անձնաւորութիւն, շատ լաւ գիտակցում եմ, թէ՛ բիզնեսմենի հոգեբանութիւնը, թէ՛ բիզնեսմենի բրոպլեմները, թէ՛ նրա՝ խնդիրները լուծելու ձեւերը: Եւ խնդրում եմ իմ նախկին գործընկերներից, որ իրենք էլ վերափոխուեն: Եւ ձեզ հաւաստիացնում եմ, որ հասարակութեան մէջ արտօնեալ ընկալում ունեցող մարդիկ ձեր աչքի առաջ վերափոխուելու են: Այդ մարդիկ գործելու են սպիտակ դաշտում: Դա հաւաստիացնում եմ միանշանակօրէն»:

Յաճախ կարելի է տեսնել, թէ ինչպէս պատգամաւոր Սամուէլ Ալեքսանեան կ'ողղկիցի նախագահ Սերժ Սարգսեանին, վարչապետ Կարէն Կարապետեանին կամ բարձրաստիճան այլ պաշտօնեաներու տարաբնույթ միջոցառումներու ժամանակ: Թէեւ Ալեքսանեանը Հանրապետական կուսակցութեան անդամ չէ, սակայն ան գրեթէ միշտ մասնակցած է իշխող կուսակցութեան խորհուրդի նիստերուն:

Լրատուամիջոցները բազմիցս գրած են, թէ «Ֆլէշ» սեփականատէր Բարսեղ Բեգլարեան, որքան



Պետական եկամուտներու կոմիտէի նախագահ Վարդան Յարութիւնեան

մօտ կանգնած է երկրի բարձրագոյն իշխանութեան:

Ինչ կը վերաբերի «Քեթրին կրուփին», բազմաթիւ են հրապարակումները, որ միջոց ու շարք մը այլ ապրանքներու ներկրման մեխանիզմը կը պատկանի այդ ընկերութեան հիմնադիր, ԴԱՀԿ նախկին ղեկավար եւ Հայաստանի բարձրագոյն ղեկավարութեան հետ սերտ կապեր ունեցող Միհրան Պողոսեանին:

Տնտեսագէտ, Հայ Ազգային Կոնկրէսի ներկայացուցիչ Վահագան Ուաչատրեանի խօսքով, «Սա հետեւանք է տնտեսական այն իրավիճակին, որը կայ այսօր Հայաստանի Հանրապետութիւնում՝ կրճատուած համախառն ներքին արդիւնք, կամ 0.5 տնտեսական աճ ապահոված ներքին արդիւնք, հարկերի թերհաւաքագրում, աշխատավարձի, կենսաթոշակների չբարձրացում, գործազրկութեան 18 տոկոս աճ, արտագաղթի պայանձն ինչը դրա հետեւանք է: Երբ որ ժամանակին խօսուում էր այն մասին, որ այս մօտելը տնտեսական չի աշխատելու, եւ տնտեսութեան այս կառուցուածքը ի վերջոյ բերելու է նրան, որ պետութիւնը ի վիճակի չի լինելու կատարել իր պարտականութիւնները: Նկատի ունեմ հարկային պարտականութիւնները»:

Վարչապետի Ընտանիքը 500 Հազար Տոլարի Ներդրում Կ'ընէ Գիւմրիի Մէջ

ՀՀ վարչապետ Կարէն Կարապետեան բազմաթիւ գործարարներու հետ Գիւմրի եկած էր՝ քաղաքի պատմական հատուածի՝ «Կոնմայրի» արգելոցին մէջ ներդրումներ կատարելու, հանրապետութեան հին, ամենակոյրիտով քաղաքը զբօսաշրջութեան կեդրոն դարձնելու նպատակով: Ներդրումները պէտք է սկսին «Կոնմայրի» արգելոց-թանգարանի տարածքին գտնուող երկու փողոցներու՝ Շիրագի ու Ռուսթավելիի վերանորոգմամբ:

Ընդհանուր առմամբ նախատեսուած է 200 միլիոն տոլարի ներդրում կատարել «Կոնմայրի» արգելոցին, 10 միլիոն՝ «Շիրակ» օդակայանին մէջ: Մինչ փողոց առ փողոց կը ցուցադրէին ու կը ներկայացնէին, թէ ինչ ձեւով պատկերացուցած են Գիւմրիի պատմական կորիզի վերականգնումը, զբօսաշրջութեան ու գործարքի զարգացումը, վարչապե-

տը առաջինը ինքը ելոյթ ունեցաւ՝ գործարարներուն օրինակ ծառայելով, որ գումար ներդնեն պատմական այս քաղաքի զարգացման համար:

Վարչապետը, որ ամբողջ օրը ոտքով շրջագայած էր հին Գիւմրիի փողոցներով, գմայլած, Գիւմրիի արուեստագիտական կեդրոնին մէջ յայտարարեց, որ բարձր տրամադրութեամբ եկած է Գիւմրի, իր ընտանիքի անդամները նոյնպէս ներդրումներ պիտի կատարեն այս քաղաքին մէջ: «Ես ցաւօք սրտի, այսօր պիզնեսով զբաղուելու ժամանակ չունեմ, բայց խնդրել եմ իմ ընտանիքի անդամներին, որպէսզի իրենք էլ ներդրումներ անեն, մեր ընտանիքի համար շատ մեծ պատիւ կը լինի, որ ներդրումներ անեն Գիւմրիում», ըսաւ ան:

Իսկ ինչքան ներդրում կը պատրաստուին ընել վարչապետի ընտանիքը, լրագրողներու հարցին ի պատասխան՝ ան տեղեկացուց՝

ԼՈՒՐԵՐ

ԱՄՆ Դեսպան.

Հայաստանի Խորհրդարանական Ընտրությունները Ազատ Կ'ըլլան Քաղաքական Կամքի Դրսեւորման Պարագային



ԱՄՆ արտակարգ ու լիազոր դեսպան Ռիչըրտ Միլս

Գալիք խորհրդարանական ընտրությունները Հայաստանի մէջ իրականին ազատ ու արդար կ'ըլլան, եթէ կառավարութիւնը քաղաքական կամք դրսեւորէ ու եթէ քաղաքական ընդդիմութիւնն ու քաղաքացիական հասարակութիւնը այդ գործընթացի երաշխաւորներու դերով հանդէս գան: Այս մասին ըսած է Հայաստանի ԱՄՆ արտակարգ ու լիազոր դեսպան Ռիչըրտ Միլս, Հայ-ամերիկեան Առեւտրի պալատի միջոցառման, ելույթ ունենալով Հայաստանի ԱՄՆ դեսպանատան ծրագրերու ու գործունէութեան ուղղութիւններու մասին:

Դեսպանը յիշեցուցած է, որ սահմանադրական հանրաքուէէն յետոյ ինք ողջունած է նախագահ Սերժ Սարգսեանի հրապարակային յանձնառութիւնը ընտրական գործընթացներու նկատմամբ հասարակական վստահութեան վերականգնման:

«Վստահութեան արժանի ընտրութիւններ կայացնելու վերաբերեալ Հայաստանի կառավարութեան հրապարակաւ ստանձնած յանձնառութիւնը կեանքի կոչելու հարցով օգնելու համար ԱՄՆ ՄԶԳ-ը՝ Եւրամիութեան, Մեծ Բրիտանիոյ եւ Գերմանիոյ եւ ՄԱԿ-ի գրասենեակի հետ համատեղ ֆինանսական օժանդակութիւն ցուցաբերած է քուէարկութեան նոր գործընթացներու ու սարքաւորումներու ապահովման համար, որոնց շուրջ պայմանաւորուածութիւն ձեռք բերուած էր ՀՀ կառավարութեան, քաղաքական ընդդիմութեան եւ քաղաքացիական հասարակութեան միջեւ, ըստ որուն՝ այս աննախադէպ համաձայնութիւն էր, ուր բոլոր կողմերը գիշումներու գացած էին:

Այս միջոցներու շնորհիւ հնարաւոր կը դառնան ընտրողներու նոյնականացումը՝ քուէարկութեան օրը եւ ընտրութիւններէն յետոյ ընտրողներու ստորագրած ցուցակներու հրապարակումը:

«Թոյլ տուէք սակայն յստակացնել, որ այս յաւելեալ միջոցները ինքնին ազատ ու արդարացի ընտրութիւններու երաշխիք չեն: Անոնք կրնան գործընթացը դարձնել առաւել թափանցիկ, առաւել դժուարացնել կեղծիքներ թոյլ տալը, սակայն ընտրութիւնները իրապէս ազատ ու արդարացի կ'ըլլան, երբ կառավարութիւնը դրսեւորէ քաղաքական կամք՝ կայացնելու նման ընտրութիւններ եւ երբ քաղաքական ընդդիմութիւնն ու քաղաքացիական հասարակութիւնը հանդէս գան երաշխաւորելու այդ գործընթացը: Միաժամանակ, ազատ եւ արդարացի ընտրութեան համար պահանջուած է նաեւ քաղաքացիական ներգրաւուածութիւն ընտրական գործընթացներուն՝ քաղաքական ընդդիմութեան ու քաղաքացիական հասարակութեան կողմէն, որուն համար մենք անցեալ տարի ուրախ էինք տեսնել անոնց կառավարութեան հետ աշխատելու ընթացքին եւ յոյսով ենք, որ դրական ու կառուցողական համագործակցութեան այս ոգին կը պահպանուի նաեւ ընտրութիւններու շրջանին եւ անկէ յետոյ: Ազատ եւ արդարացի ընտրութիւններու կայացման համար կառավարութիւնը նաեւ պէտք է ձեւաւորէ այնպիսի միջոցներ, ուր լրատուամիջոցներն ու քաղաքացիական հասարակութիւնը ազատ են, անկախ ու առանց սահմանափակումներու», ըսած է դեսպանը:

Պելառուսի Գերագոյն Դատարանը

Շարունակուած էջ 1-էն

Ալեքսանդր Լափշինի փաստաբան Նաթալիա Շեկինա լրագրողներուն ըսած է, որ բողոքի քննարկումը կէս ժամ չէ տեւած եւ նիստը դադարեցուցած է:

Անոր փաստաբանը նաեւ ըսած է, որ Լափշինի կինը դիմած է Մինսկի իրաւապահաներուն՝ Լափշինին լրացուցիչ պաշտպանութիւն տրամադրելու խնդրանքով:

Պելառուս օրէնդրութեամբ, յաւելեալ պաշտպանութիւն կրնայ տրամադրուիլ այն օտարաբերկրացիներուն, որոնք կը գտնուին Պելառուսիա, փախստականի կար-

գավիճակ հայցելու հիմքեր չունին, բայց հիմնաւոր մտահոգութիւններ ունին, որ հայրենիք վերադառնալու պարագային կրնան ենթարկուիլ խոշտանգումներու ու նուաստացման:

Սակայն, առանց սպասելու այդ բոլորին լրագրողը օդանաւ դրուելով ուղարկուած է Պաքո:

Ըստ փաստաբանին, Լափշինի կինը նաեւ բողոք չղած է ՄԱԿ-ի մարդու իրաւունքներու կոմիտէին, որ գայն վարոյթ ընդունած է:

Ալեքսանտր Լափշին տարիներ առաջ երկու անգամ այցելած է Լեռնային Ղարաբաղ, ամիսներ

2016-ին Հայաստան Եկած է 1,259,657 Զբօսաչրջիկ



Տեսարան մը Երեւանի Քաղաքապետարանի մամլոյ ասուլիսէն

Երեւանի քաղաքապետարանի զբօսաչրջութեան բաժնի աշխատանքները համակարգող, Երեւանի քաղաքապետի օգնական Մարիա Բարաղամեան լրագրողներու հետ հանդիպման ժամանակ ներկայացուցած է զբօսաչրջութեան ոլորտին մէջ 2016-ին իրականացուած աշխատանքներն ու 2017-ի ծրագրերը:

Երեւանի քաղաքապետի օգնականը նկատած է, որ ըստ պետական վիճակագրական ծառայութեան տուեալներուն՝ 2016-ին Հայաստան եկած է 1,259,657 զբօսաչրջիկ, որոնք առնուազն մէկ օր անցուցած են Երեւան: Զբօսաչրջիկներու հիմնական ներհոսք նկատուած է յատկապէս Նորին Սրբութիւն Հռոմի Պապ Ֆրանցիսկոսի այցի եւ մայրաքաղաքի օրուան նուիրուած տօնակատարութեան օրերուն:

Անդրադառնալով զբօսաչրջութեան բաժնի կողմէ կարեւորուող 2017-ի համար նախանշուած ծրագրերուն եւ աշխատանքներուն՝ Երեւանի քաղաքապետի օգնական Մարիա Բարաղամեան ներկայացուցած է անոնցմէ թիրախայինները:

«Զբօսաչրջային ենթակառուցուածքների զարգացման տեսանկյունից կարեւորուում է Երեւանի կենդանաբանական այգու արդիականացման ծրագիրը, նկատուում է այցելուների մեծ ակտիւութիւն: Երեւանը զբօսաչրջիկների համար գրաւիչ ու հետաքրքիր վայր դարձնելու միւս ծրագրերից է «Վերնիսաժի» վերակառուցումը եւ արդիականացումը:

Փոխադրական խնդրից բացի, յառաջիկայում համայնք-մասնաւոր հատուած համագործակցութեան շրջանակում Երեւանի կեդրոնում կը տեղադրուի նաեւ 6-7 պիտուկարան»:

Ատրպէյճան Հրաժարած է իր Գերեվարուած Զինծառայողէն

Ատրպէյճանական կողմը դարբանադատաբանական շփման գիծի հիւսիսային՝ Թալիշի ուղղութեամբ ձեռնարկած է ներթափանցման փորձ:

«Կազմակերպուած հակադիվերսիոն գործողութեան արդիւնքում՝ առաջնագիծը պաշտպանող հայկական ուժերին յաջողուել է գերեվարել ատրպէյճանական բանակի զինծառայող, 1995 թ.-ին Բարդա քաղաքում ծնուած էլնուոր Հիւսէյն Զատէն: Ըստ հաւաստի տուեալների՝ հակառակորդը տուել է նաեւ առնուազն 1 վիրաւոր, ինչն, ի դէպ, պաշտօնապէս հաստատուել է Ատրպէյճանի ՊՆ-ի կողմից տարածուած հաղորդագրութեամբ», - փոխանցած է Լեռնային Ղարաբաղի պաշտպանութեան բանակը:

Ատրպէյճանի Պաշտպանութեան նախարարութիւնը, հերքած է ներթափանցման փորձի եւ իր կորուստներու վերաբերեալ տեղեկութիւնները, նշելով, որ հայկական ուժերու կողմէ գերեվարուած ատրպէյճանցի էլնուոր Հիւսէյնգատէ, որպէս կարգապահ զինծառայող, զօրացրուած է բանակէն եւ ներկայիս հաշուառուած չէ Ատրպէյճանի զինեալ ուժերուն մէջ:

Լեռնային Ղարաբաղի Պաշտպանութեան բանակի մամլոյ խօսնակ

Մէնոր Հարաթեան անտրամաբանական ու անհասկանալի համարած է, թէ ինչպէս կրնայ բանակէն զօրացրուած զինծառայողը՝ զինուորականի համագեղատով, սպառազինուած ու առաւել եւս՝ ներթափանցման խումբի կազմին մէջ, ներթափանցել հակամարտ գործերու միջոցով քաղաք տարածք, փորձել կատարել յատուկ նշանակութեան գործողութիւն եւ յայտնուիլ հայերու ձեռքը:

Ապրիլեան քառօրեայ պատերազմէն ամենաշատ տուժած բնակավայրերէն Թալիշի ուղղութեամբ իրականացման պատճառը, ըստ Դաւիթ Պապայեանի՝ այժմ Թալիշի մէջ իրականացուող լաչնաձաւալ շինարարական աշխատանքներն են:

Տարածաշրջանային հետազօտութիւններու կեդրոնի ղեկավար Ռիչըրտ Կիրակոսեանի դիտարկմամբ՝ այս ինչպէս նաեւ Տաւուշի մէջ նախորդ տարեվերջին ատրպէյճանական կողմի ձեռնարկած ներթափանցման փորձերը ստուգողական էին՝ պարզելու հայկական կողմի պատրաստութիւնը:

«Այդ դէպքերն սպառնացում են, որ Ատրպէյճանը մտադրութիւն ունի յառաջիկայ ամիսներին շարունակել ռազմական գործողութիւնները Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի դէմ»:

առաջ ալ քննադատած է Իլհամ Ալիեւին, որմէ ետք պաշտօնական Պաքոն անոր դէմ մի քանի քրէական գործ յարուցած է եւ միջազգային հետախուզում յայտարարած:

Ատրպէյճանի մէջ անոր մեղադրանքներ ներկայացուած են մի քանի յօդուածներով, ըստ որոնց, Լափշինին 5 տարուան ազատազրկում կը սպառնայ:

ՏԱՐԵՇԻ ՎՏԱՆԳԸ ԵՒ ԱՐՑԱԽԻ ՍԱՐՄԱՆՆԵՐԸ

ՍԱԳՕ ԱՐԵԱՆ

Ատորպեյձանական «ԱՊԱ» գործակալութեան կողմէ տրուած լուրով մը, Ատորպեյձանի պետական անվտանգութեան ծառայութիւնը կը հաղորդէր «յատուկ գործողութեան» մը մասին, որուն գլխավոր խնդիրը հարուած տալն էր իսլամիստ խմբաւորման մը:

Ըստ նոյն աղբիւրին, պետական ծառայութիւնը «յաջողութեամբ» պսակած է իր «առաքելութիւնը», սպաննելով այդ խմբաւորման անդամ 4 զինեալներ եւ ձեռքաւարելով մէկ մեղադրեալ:

Առաջին անգամը չէ որ ատորպեյձանական մամուլին մէջ ահաբեկչութիւն կատարելու կանխավարկածով ձեռքաւարակներու մասին լուր կը հրատարակուի, սակայն այս դէպքը միւս դէպքերէն կը զատորոշուի այն իմաստով, որ դէպքը կը խօսի «գոնգրէթ» գործողութեան մը եւ այդ գործողութիւնը «կանխելու» մասին:

Դէպքին մասին հրատարակուած լուրը ինչքանով կը գրաւէ միջազգային հանրութեան ուշադրութիւնը՝ ցարդ յստակ չէ, սակայն պարզ է նաեւ, որ սուտի եւ ստախօսութեան վրայ հիմնուած Պաքուի վարչամեքենային կողմէ «արտադրուած» այս լուրը կրնայ պէտք եղած ուշադրութեան արժանի չդառնալ ու մոռացուած մատնուիլ:



Չի բացառուիր նաեւ, որ Պաքու իր այս քայլով կը փորձէ ցեխով ծածկել անուանի լրագրող Ալէքսանտր Լափշինի հարցին վրայ: Յիշեցնենք, որ երկու երկիրներու քաղաքացի Լափշին, որ ներկայիս կը գտնուի Պելաուստիոյ մէջ, կանգնած է Պաքուին արտայանձնուելու վտանգին դիմաց: Ծանչցուած լրագրողին միակ մեղքն այն է, որ ան այցելած է Արցախի Հանրապետութիւն (նախկին անուանումը՝ ԼՂՀ), բան մը, որ ոչ միայն ընդվզում յառաջացուցած է Ալիեւի վարչախումբին մօտ, այլ՝ «գործ-նական քայլեր»ու երթալով, Պաքու այսօր կը պահանջէ Լափշինի արտայանձնումը:

Յիշեցնելու կարգով հարկ է նշել, որ առաջին անգամը չէ որ Ատորպեյձան արտայանձնումի իր «խաղը» կը կիրառէ: Առաջին անգամ Պաքու նման «գործ» կատարած էր 2012-ին, երբ խաղաղապահ առաքելութեան մէջ գտնուող Գուրգէն Մարգարեանը կացինահարած (Փետրուար 2004) Ռամիլ Սաֆարովը Հոնկոնգի կ'արտայանձնէր Պաքուին: Յիշենա բանտարկութեան պատիժի արժա-

նացած Սաֆարովի արտայանձնումը բողոքի լայն ալիք կը բարձրացնէր եւ Հայաստանի Հանրապետութիւնը կը խզէր (ու ցարդ ալ խզուած կը պահէ) Պուտաբէշտի հետ իր դիւանագիտական յարաբերութիւնները:

Այս բոլոր գործարքներուն մէջ հիմնական «ֆաթէթ»ը դրամն է ու Պաքու իր այս գործելաոճին դիմաց հասած է փուլի մը, որ թաքցնելու խնդիր չունի, որովհետեւ եւրոպական շարք մը գործիչներ հանգիստ խղճով կ'ենթարկուին Ալիեւի վարչամեքենայի կամքին:

Մէկ կողմէ եւրոպական տէրութեանց «ամենաթող» կեցուածքները, միւս կողմէ ալ եւրոպացի կարգ մը գործիչներու դրամին առջեւ ցոյց տուած թուլակամութիւնը խնդիրը հասցուցած են այնպիսի հարթութեան մը, որ Պաքու ինքզինք կը համարէ «անպարտելի» ու կը շարունակէ գործել այդ մօտեցումով:

Վերադառնալով Պաքուի մէջ երէկ կատարուած գինուորական «գործողութեան», հարկ է նշել, որ Տահէշի կամ ռատիքալիստ գինեալներու թեման այդ երկրին համար նորամուտ թեմաներ չեն:

Սուրիոյ պատերազմի ամէնէն թէժ փուլերուն, ընկերային ցանցերու կամ լրագրողներու կողմէ տարբեր առիթներով հրատարակուած լուսանկարները ցոյց կու տան, որ Պաքու թերեւս

«անհատական նախաձեռնութիւն» հանդիսացող խմբաւորումի ձեռքով կը մասնակցի սուրիական պատերազմին: Գաղտնիք ալ չէ, որ Պաքու-Թիֆլիս-Պոլիս թէժ գիծը ցայսօր ալ կը գործէ: Ժիշդ է, որ Մոսկուա-Անգարա յարաբերութեանց «բնական-նացում»ն այս առիթն թուրքիան յայտնուած է բոլորովին այլ դերի մը մէջ, բայց դժուար է պատկերացնել, որ Պոլսոյ, Իզմիրի, Գոնիայի եւ Թրքական տարբեր քաղաքներու մէջ «բոյն հաստատած» անհատ գինեալներ կը շարունակեն մնալ «Սթէնտ պայ» վիճակի մը մէջ:

Թուրքիա դադրած է բացայայտ գորակցութիւն ցոյց տալ այդ իսլամիստներուն, բայց եւ այնպէս այդ երկրին մէջ գործող խմբաւորումները անվերահսկելի են:

Ժիշդ է, որ Հալէպի մէջ կատարուած դէպքերը եւ իսլամիստներու դէպի Իտլիպ նահանջը ցոյց տուաւ, որ էրտողան ամէն գնով «համամիտ» է գործադրելու Ռուսաստանի նախագահին թելադրանքները, բայց եւ այնպէս խաղը հոս չ'աւարտիր:

Սուրիոյ մէջ կուռող իսլամիստ

Կարօ Փայլան «Թուրքիա Վճռական է Երթալ Այն ճանապարհով, որ Պատմութիւնը Նախագիշտուցած է Չերթալ»



Թուրքիոյ քրտամետ ժողովուրդներու Ռամկավար ուսակցութեան անդամ, հայ պատգամաւոր Կարօ Փայլան, որ մեծլիսին մէջ «ցեղասպանութիւն» եզրոյթը կիրառելու համար հեռացուեցաւ նիստի աշխատանքներէն յօդուած գրած է՝ անդրադառնալով կատարուածին եւ իր ելոյթի նպատակին: Յօդուածը հրատարակուած է «Ակօս» պարբերականին մէջ:

Փայլան պատմած է, որ նախորդ շաբաթ այցելած էր Պեւլին Հրանդ Տինքի յիշատակին նուիրուած միջոցառման մասնակցելու նպատակով: Այցի շրջանակէն ներս ան գացած էր Գերմանիոյ խորհրդարան, ուր ականատես եղած էր Հոլոքոսթի զոհերու յիշատակին նուիրուած միջոցառման:

«Ես հիացած էի: Գերմանիոյ խորհրդարանը յարգանքի տուրք կը մատուցէր ոչ վաղ անցեալին նացիստական կառավարութեան կողմէ իրականացուած մեծ յանցանքի զոհերուն: Իսկ ես, եկած էի ամբողջովին այլ մթնոլորտէ: Երկրէ մը, որ չի կրնար առերեսուիլ երեկուան գուլումի հետ եւ կը շարունակէ այսօրուանը... Ես որպէս հայ պատգամաւոր չեմ կրնար խօսիլ 102 տարի առաջուան մեղքերու մասին, մինչդեռ գերմանացիները՝ աջակողմեան եւ ձախակողմեան, իշխանական եւ ընդդիմադիր, ձեռք ձեռքի տուած եւ մեծ ինքնավստահութեամբ կ'առերեսուէին իրենց սխալներու հետ: Եւ ոչ ոք չէր մտածեր, որ կը ստորացուի գերմանական ինքնութիւնը», - գրած է Փայլան:

Խօսելով իր ելոյթի մասին՝ պատգամաւորը նշած է, որ նպատակ ունէր պատգամաւորներուն մտովի տեղափոխել օսմանեան ժամանակաշրջան, երբ սկսած էին այն

ժամանակուան սահմանադրական քննարկումները՝ ցանկալով չիշեցնել այդ տարիներու սխալները: «Այսօրեայ մեջլիսում քննարկող սահմանադրական փոփոխութիւններու առաջարկը «Ազգայնական Շարժում» կուսակցութիւնը կ'որակէ որպէս «թուրքի սահմանադրութիւն»: Այդ ինչ կը վախցնէ, քանի որ այն ժամանակ թալիթ եւ էնվէր փաշաները նոյն տրամաբանութեամբ թուրքի սահմանադրութիւնը դրին կիրառութեան մէջ, ուր որոշ քաղաքացիներ առ ոչինչ համարուեցան: «Յեղասպանութիւն» բառը օգտագործելու համար ինչ պատմութեան մէջ չտեսնուած պատիժի ենթարկեցին», - նշած է Փայլան:

Ան ընդգծած է, որ իր հիմնական նպատակը ոչ թէ բանավէճ սարքելն էր, այլ յորդորելն էր անցեալէն դաս քաղել եւ նոյն սխալները այլեւս չկրկնել: «Ինչ համար խնդիրը միայն մեծլիսին մէջ խօսքի ազատութեան սահմանափակումը, ընտրուած անձի նկատմամբ անարգանքը կամ «այդ բան» կիրառել-չկիրառելը չէ: Անոնք իհարկէ կարեւոր են, սակայն հիմնական վախցնողը այն է, որ Թուրքիա վճռական է երթալ այն ճանապարհով, որ պատմութիւնը նախագիշտուցած է չերթալ», - նշած է Կարօ Փայլան:

«Այս հողը, որուն 10 տարի առաջ յանձնեցինք Հրանդ Տինքին, այսօր աղանիի անհանգստութիւն կ'ապրի: Այդ վախուրածութիւնը անտեղի չէ: Մենք՝ հայերս, այդ ամենալաւը գիտենք: Այդ պատճառով ձեզ՝ մեծամասնութեանը կը դիմեմ՝ եկէք ետ դառնանք այդ պատմական սխալէն», - եզրափակած է մեծլիսի հայ պատգամաւորը:

խմբաւորումներու հարցը կը նմանի բաց վէրքի մը, որ ցայսօր ալ կը շարունակէ հեռու մնալ իրական բուժումներէ:

Անդին, եթէ Անգարայի համար թիւ մէկ խնդիրը Սուրիոյ պատերազմին մասնակցող եւ ամէն առիթի նոր կեցուածք ընդունող քիւրտներն են, ապա չէ բացառուած, որ Անգարա ամէն ճիգ գործադրէ ի շահ իրեն եւ ի վնաս քիւրտներուն «կազմակերպելու» համար ռատիքալիստ գինեալներու պարագան:

Ու այստեղ է որ կարեւոր հարցում մը կը ծագի:

Ո՛ւր պիտի մեկնին այդ գինեալները, եթէ յանկարծ Սուրիոյ մէջ գետին շահի քաղաքական լուծումներու օրակարգը: Սեպտեմբեր ամսին Իտլիպէն հեռացան, կամ թէ հոն «կայք հաստատած», մինչեւ տաս հազար թուաքանակ ունեցող գինեալներուն կէսը իրենց գէնքերը

յանձնեցին սուրիական պետութեան, ապա ի՞նչ ճակատագիր կը սպասէ միւսներուն:

Այս հարցադրումները կը բարձրաձայնուին այնպիսի փուլի մը, երբ Թուրքիա կը պատրաստուի ներքին սահմանադրական հանրաքուէի (Ապրիլ) ու հաւանական է, որ այդ գործընթացը իր հետ վերահանէ իսլամիստ ճակատի բոլոր «բարիքներ»էն օգտուելու գործընթացը:

Այսինքն հոն է նաեւ, որ էրտողան պիտի ստիպուի «տուրք տալու» եւ ամէն գնով իր «գրկին» մէջ պահելու իսլամիստներն ու անոնց համախոհներու բաւական լայն շրջանակը:

Ասկէ գատ, չէ բացառուած որ Պաքուէն թուրքիա «ապաստանած» գինեալ խմբաւորումները

ԽԵԼԱԳԱՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

Եթե ձեր դիմաց խորամանկութեամբ ծրագրուած նախագիծ մը կայ, եւ դուք նախագիծը խելագարութիւն կ'անուանէք, այդ չի նշանակեր որ դուք սխալած էք, այդ ցոյց կու տայ ծրագրին ներգութեան չափանիշը:

ՍԱՅԱԹ ԹԵՔԻՐ «ՆՈՐ ԶԱՐԹՕՆՔ»-ի անդամ

Թուրքիոյ մէջ տեղի ունեցած 7 Յունիս 2015-ի ընտրութիւններէն ետք, Ռէճէպ Թայիպ Էրտողանի կողմէ իշխանութեան բարձրացած ֆաշիստ ուժի մի ոտնձգութեան վերջին քայլը եղաւ Ժողովուրդներու Ժողովրդավարական կուսակցութեան (ԺԺԿ) երեսփոխաններու կալանաւորումը: Թուրքիոյ մէջ բոլոր ժամանակաշրջաններուն ֆաշիզմը գոյութիւն ունեցած է, սակայն այսօր կ'ապրինք բացայայտ ֆաշիստական իրավիճակի մը մէջ: Այս յօդուածը գրուած ժամանակ, ԺԺԿ-ի երեսփոխաններուն խորհր-

թիւն»ը կնքեց, այսպիսով արտաքին աշխարհէն գալիք հակադարձութիւններու մեղմացումը ապահովելէ ետք, Թայիպի Էրտողան եւ իր վարչակարգը զրահապատ մեքենաներ զրկեցին քրտաբնակ քաղաքները, հիմնադրական գետնին հետ հաւասարեցնելով այդ բնակավայրերը, ցեղասպանութեան նմանող կոտորածներ իրականացուցին: Ինչպէս որ իթթիհատ վէ Թարաքի կուսակցութիւնը օգտուելով Ա. Աշխարհամարտ կոչուած, կայսերապաշտական բաժնետիրական պատերազմի առիթէն, Հայոց Ցեղասպանութիւնը գործադրած էր, 100 տարի ետք նոյն հողերուն վրայ, անոր նմանող արարքներ ապրե-




դականները ձերբակալուեցան եւ 370 միութիւններ փակուեցան: Յունիսի ընտրութիւններուն, մեծամասնութեամբ քրտաբնակ շրջաններուն մէջ ԺԺԿ-ի ստացած 6 միլիոնէն աւելի քուէները, իշխանութեան գլուխը գտնուող Արդարութիւն եւ Զարգացում կուսակցութեան (ԱԶԿ) քուէներու լուրջ անկումը, եւ Սուրիոյ մէջ կիրարկուող քաղաքականութեան մեծ ձախողութիւնը, վերջ դրին երկար ժամանակէ ի վեր քննարկուող բախումներու դադրեցման գործընթացին: Թուրքիոյ եւ Սուրիոյ մէջ քրտական քաղաքական եւ զինուորական գործունէութեան ընդլայնումը եւ անոր օրինականութեան տարածքին մեծացումէն ետք, Ռէճէպ Թայիպ Էրտողան եւ իր անձնակազմը քաղաքական տարբեր գործելաձեւեր սկսան կիրարկել, ընդհուպ սպանդներ: Ապաստանեալներու հարցը աղտոտ շահարկման դնելով Էրտողանի վարչակարգը Եւրոպական Միութեան հետ «ետ ընդունելու համաձայնու-

ցանք: Էրտողան շարունակելով Երիտթուրքերու ցեղասպանական արարքները, կը հանդիսանայ անոնց ոճիրներուն տէրն ու ժառանգորդը: Յունիսի ընտրութիւններէն ետք, իշխանութիւնը չձեւաւորուելու պատճառով, Նոյեմբեր 1-ին տեղի ունեցան երկրորդ ընդհանուր ընտրութիւնները: Ընտրութիւններու նախօրէին ԱԶԿ-ի հանրահաւաքներուն քննադատութեան թիրախներն էին հայկական սփիւռքի, քիւրտերու, ընկերվարականներու եւ Կիւլէճի խմբակի միջեւ եղած «համագործակցութիւն»ը, որոնք իբր կը փորձէին Թուրքիան քայքայել եւ տարանջատել: Այս քարոզարշաւը շարունակուեցաւ մինչեւ ընտրութիւնները: Այս անողք բարոզութեան եւ Զարգերու ազդեցութեան տակ, տեղի ունեցան 1 Նոյեմբեր 2015-ի ընտրութիւնները: Էրտողանի ֆաշիստական քաղաքականութիւնը տրւաւ իր պտուղները, եւ ԱԶԿ-ն կրցաւ ստանալ թուրք ազգայնականներու եւ քիւրտ գործնականապէս արկախուեցաւ, եւ

խորդ ընտրութեան ստացած քուէներուն վրայ հինգ միլիոն աւելցնելով: Միւս կողմէ, ընտրութեան նախօրէին եւ ընտրութեան օրը

ամէն ինչ հանրապետութեան նախագահին շրթունքներուն միջեւ բանտարկուեցաւ: «Մենք ժողովուրդն ենք, Թուրքիան յեղաշր-



Կեցցէ ցեղապաշտ Թուրքիան

տեղի ունեցած ճնշումներու ազդեցութեան տակ, ԺԺԿ-ն կորսնցուց մօտ մէկ միլիոն քուէ:

ՆԱՆԱԳԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՏԱԿԱՐԳ ՎԻՃԱԿ

Էրտողանի տարիներու միահեծան քաղաքականութեան պատճառներէն մէկն ալ, դէպի նախագահական համակարգ անցումին մշտական յետաձգումն էր: Վերջին շրջանի բռնութիւնները պատճառաբանելով, Էրտողան հետեւողականօրէն կը պնդէ եւ կը պահանջէ խորհրդարանէն անցնիլ դէպի նախագահական վարչակարգ: Յիշենք անոր յայտարարութիւնը 2015-ի Յունիսի ընտրութիւններէն առաջ երբ ըսաւ. «400 երեսփոխան տուէք այս հարցը հանգստութեամբ թող վերջանայ»: Միանձնեայ ուժի մասնակցութեամբ Էրտողան ԱԶԿ-ի 14 տարուայ իշխանութեան ընթացքին, ԱԶԿ-ի մէջ իրեն մրցակից ըլլալու շաւակնութիւն ունեցող բոլոր անդամները չէզոքացուցած եւ արտաքսած է կուսակցութեան: Այսօրուս դրութեամբ Թուրքիոյ մէջ մահկանացուի մը աթոռին սիրահարութեամբ կառուած մնալը հասած է «խելագարութեան վիճակ»: Այնուամենայնիւ 2015-ի Նոյեմբերի ընտրութիւնները չի կրցան նախագահական ուժի միջին անցումի գործընթացը արագացնել: Այստեղ Էրտողանին օգնութեան հասաւ Յունիս 15-ին տեղի ունեցած ձախող զինուորական յեղաշրջումը, որ Էրտողանի խօսքերով. «Աստուծոյ մէկ շնորհն էր»:

Չունին եւ ահաբեկչութեան չենք կերցնէր», այս բովանդակութեամբ պատաստներ եւ ցուցանակներ լեցուեցան փողոցներուն, փոխադրամիջոցներուն եւ հրապարակներուն վրայ: Թիրախները յայտնի էին, նախ Կիւլէճի համայնքը յետոյ քիւրտերը եւ սոցիալիստները: Արտակարգ իրավիճակի գործադրութիւնը շատ արագ ցոյց տուաւ իր ազդեցութիւնը, Կիւլէճի համայնքին պատկանող հաստատութիւնները մէկ առ մէկ փակուեցան: Հալածանքներէն իրենց բաժինը ստացան ընդդիմադիր շրջանակները, սոցիալիստներուն կամ քիւրտերուն մօտիկ մեծ թիւով թերթեր, հեռուստակայաններ եւ ռատիոկայաններ փակուելով անոնց ունեցուած քնները բռնազրուուեցան: Այս ընթացքին մէջ քեմալական գաղափարախօսութեան հետեւորդ Ժողովրդահանրապետական կուսակցութեան (ԺՀԿ) առաջնորդ Քեմալ Քըլճատարօղլու փակ դռներու ետին խօսելով կ'ըսէ, որ այսօր այլեւս որոշումը վարչապետին եւ նախարարներուն ձեռքը չէ, այլ անցած է նախագահին ձեռքը: Եւ միւս կողմէ երկրին օրէնսդրական, վարչական եւ դատական բոլոր իշխանութիւնները մէկ ձեռքի մէջ կեդրոնացումը, պետութիւնը շատ լուրջ խնդրի առջեւ կը դնէ: Հետեւաբար, երկրի մը ճակատագիրը մէկ անձի շրթունքներուն մէջ ըլլալը ցոյց կու տայ այդ երկրին միապետական դրութիւնը: Հարկ է նշել, որ Թուրքիոյ այս վիճակին մէջ գտնուելուն պատճառներէն մէկը Թուրքիոյ երկրորդ ամենամեծ կուսակցութեան՝ ԺՀԿ-ի կրաւորական դիմադրութիւնն է: Երեսփոխանները ձերբակալու մասին օրէնքի քննարկման ժամանակ, ԺՀԿ-ն հակառակ երկրի սահմանադրութեան «այդ» քուէարկեց, եւ ձերբակալութիւններէն ետք նոյնիսկ չգատապարտեց քրտամէտ ԺԺԿ-ի երեսփոխաններու ձերբակալութիւնները: Յստակ է, որ Թուրքիոյ մէջ քրտական եւ հայկա-

Շար.ը էջ 18

Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> • Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> • Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning 	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> • Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403B
--	---	---

Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Աճիրաճեղս է

Coverage & Protection should be on the top of your priority list.

ՄԻՆ ԽՈՍՏՈՒՄՆԵՐ (Բ)

ՈՍԿԱՆ ՄԻՆԻՔԱՐԵԱՆ

Համաշխարհային առաջին պատերազմի աւարտին, Լօզանի տիրահաշակ դաշնագրով արդէն վերջ տրուած էր «Արեւելեան Հարցին» եւ յօդա ցնդած՝ Հայ ժողովուրդի բոլոր երազանքները Արեւմտահայաստանի եւ Կիլիկիոյ վերաբերեալ: Հայ ժողովուրդին տրուած բոլոր խոստումները մնացին թուղթի վրայ եւ մեզի կը պակսէր «երկաթեայ շերտ» մեր բաժինը ստանալու համար միջազգային քաղաքականութեան խոշոր կաթսայէն: Բոլորն ալ լքեցին մեզ որք ու մինակ: Ամերիկայի Միացեալ Նահանգներու յաջորդական իշխանութիւնները տէր չկանգնեցան մեր արդար դատին, հակառակ նախագահ Վուտրօ Ուիլսոնի (Woodrow Wilson) խոստումներուն: Հետեւաբար հարց տանք թէ ինչի՞ կը ծառայէ ցեղասպանութեան ճանաչման համար մեր թափած աշխատանքները, երբ նոյն այդ պետութիւնները չունին պարկեշտութիւնն ու քաջութիւնը ընդունելու իրենց անցեալի սխալները, նամանաւնդ Ամերիկան որ այսքան ատեն է ի վեր կը մերժէ ճանչնալ ցեղասպանութիւնը որպէս միջազգային կանխամտածուած ոճիր Հայ ժողովուրդի դէմ, իրագործուած՝ Թուրք պետութեան կողմէ: Եւ այս բոլորէն ետք կրնա՞յ ըլլալ որ ան պիտի համաձայնի որ քրիստոնէական եկեղեցիները իրենց սեփական տէրերուն վերադարձուին: Կարելի՞ է այսքան միամիտ ըլլալ: Ե՞րբ պիտի փարատենք մեր մանկամիտ պատրանքը:

Դժբախտութիւնը շարունակուեցաւ երբ դաշնակից պետութիւնները, ներառեալ Միացեալ Նահանգները, Լօզանի տիրահաշակ դաշնագրէն ետք չկրցան գործադրել Սելրի դաշնագրի տրամադրութիւններն ալ, եւ որպէս տխուր հետեւանք՝ Արեւմտահայաստանը դադրեցաւ քաղաքական ինդիք ըլլալէ: Յաղթական դաշնակից պետութիւններու համար պատերազմը աւարտած էր եւ Թուրքիան կրնար անգամ մը եւս փայտալէ իր «կայսրութիւն» դառնալու Օսմանեան ցանկութիւններն ու երազանքները:

Թուրք պետութեան դէպի Արեւելք եւ Արեւմուտք ընդարձակուելու ցանկութեան արդիւնքն են Յունական կղզիներու հարցը, Հիւսիսային Կիպրոսի գրաւումը, Սուրիոյ սահմաններու բռնաբարումը, Իրաքեան սահմանէն ներս ռազմական գործողութիւնները, Ատրպէյճանական քարոզչական վարչամեքենային հետ իր համագործակցութիւնը, եւ պատերազմական մասնագէտներով ու զինուորներով իր անսահման մասնակցութիւնը՝ Արցախեան պատերազմին:

Գաղտնիք չէ նաեւ, թէ հակառակ իր բոլոր ընկերային եւ հասարակական փտութեան, Թուրքիա կը փորձէ նաեւ անդամակցիլ Եւրոպական Միութեան որպէս «քաղաքակիրթ» երկիր: Պարզապէս կարելի է ըսել որ Թրքական խորամանկութեամբ եւ պատեհապաշտութեամբ ան կը ցանկայ ընդարձակել իր ազդեցութիւնը որպէս Նաթօյի մէկ անդամը, իր աւելի քան մէկ միլիոն կազմ ու պատրաստ բանակով: Հետեւաբար կարելի է յայտարարել, թէ Թուրքիա միջոցներու մէջ երբեք խորու-

թիւն չի դնէր եւ չէ դրած հասնելու համար Օսմանեան կայսրութիւնը վերականգնելու իր ցնորածին ախորժակներուն ու երազանքներուն իրականացման:

Թրքական այս ծաւալուն ախորժակներուն դիմաց ի՞նչ կ'ընեն Եւրոպական Միութեան անդամները, եւ մանաւանդ Ամերիկայի Միացեալ Նահանգները: Միջազգային ոյժերու փոխյարաբերութեան եւ ընդհանրապէս միջազգային ներկայ իրականութեան մէջ, ազգային ազատագրական պայքարները՝ մասնաւորաբար Քրտական հարցը՝ կը դիտուին բացառապէս սեփական շահերու անկիւնէն միայն: Նման հարցերու մէջ, գերպետութիւններու համար միջազգային դրամատիրութեան յարուցած առաջադրանքներու նպատակայարմարութիւնն է, որ կը ճշդէ անոնց կեցուածքը: Այլ խօսքով՝ գերպետութիւնները իրենց սեփական շահով եւ գիրենք հետաքրքրող ծրար-

գիրներու իրականացման կշռոյթով է որ կը ղեկավարուին: Դժբախտաբար այս բոլորը իրենց անդրադարձը կ'ունենան մասնաւորաբար փոքր ժողովուրդներու ճակատագրին եւ կեանքի ընթացքին վրայ:

Փոխյարաբերութիւններու այս մթնոլորտին մէջ, հայապատկան հողերու պահանջատիրութեան որեւէ քայլի դիմաց՝ թէ՛ Թուրքիան եւ թէ՛ գինք հովանաւորող «քաղաքակիրթ» երկիրները, ի մասնաւորի Ամերիկայի Միացեալ Նահանգները, Հայ ժողովուրդի արդար իրաւունքը պաշտպանելու եւ պահանջելու փոխարէն, Թուրքիոյ հողային ամբողջականութիւնը կը ջատագովեն, ելլելով իրենց պետական շահերէն: Ահաւասիկ այս մտտեցումն է, որ հակամարտութեան դաշտը կը խորացնէ եւ յեղափոխական շարժման կը մղէ ճնշուած եւ անիրաւուած ժողովուրդները:

Վերեւ յիշատակուած ծիրին մէջ նամանաւանդ ներկայ հանգրուանին յատուկ կարեւորութիւն կը ներկայացնէ քրտական հարցը: Դժբախտաբար մինչեւ այսօր քրտա-

կան մարտական ոյժերու անմիաբանութիւնն ու անոնց միջեւ գործակցութեան պակասը աննշան յաջողութիւններու հասցուցած է գիրենք: Գիտակցելով հանդերձ ներկայ իրական պայմաններու անփառունակ վիճակին, պէտք է իմանանք որ Հայկական հարցը Թուրքիոյ մէջ այն աստիճան հիւսուած է Քրտական հարցին հետ, որ հայքրտական ծրագրուած եւ հաւասարակշռուած գործակցութիւն մը միայն կրնայ շահ ապահովել երկու կողմերուն:

Եւ որպէսզի յիշատակուած գործակցութիւնը իր գործնական արտայայտութիւնն ու ուժականութիւնը ունենայ հայ կեանքի ու մանաւանդ սփիւռքահայ կեանքի մերօրեայ պայմաններուն մէջ, պէտք է ուժեղացնել սփիւռքը իր կազմակերպչական բոլոր աշխատանքներուն մէջ եւ ստեղծել կեդրոնացած միացեալ համահայկական մարմին մը աշխուժացնելու համար հայքրտական ծրագրուած գործակցու-

Շար.ը էջ 18

Valentine's Day Dinner Dance



Միրահարներու Օրուայ Առթիւ Ճաշկերոյթ Պարահանդէս

Organized by **H.M.M. Ladies Society** Կազմակերպութեամբ՝ **Հ.Մ.Մ. Տիկնաց Վարչութեան**

Saturday February 11, 2017 at 8:00 p.m.


Տեղի Կունենայ՝
Շաբաթ Փետրուար 11, 2017
Երեկոյան ժամը 8:00 -ին

Երեկոն Պիտի Խանդավառէ Երգիչ՝
Խաչիկ Ջենեան

Entertainment by *Armenian Singer*
Khachig Zanian

1060 N. Allen Ave. Pasadena Ca. 91104
Մուտքի Նուէր՝ \$50.⁰⁰ Admission: \$50.⁰⁰

For reservation call
Տոմսերու եւ մանրամասնութիւններու համար հեռաձայնել՝
Knar (626) 497-5111 or (626) 398-0506



ԴՈԿՏ. ՌԻՉԱՐԴ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ
ՆՈՐ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆԸ


«ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆԻ ՀԻՒՍԻՍ-ԱՐԵՒԵԼՔԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ»

Վաստակաշատ պատմաբան եւ
Լոս Անճելոսի Գալիֆորնիա հա-
մալսարանի արդի հայոց պատմու-
թեան ամպիոնի վարիչ փրոֆ.
Դոկտ. Ռիչարդ Յովհաննիսեանի
հետ շահեկան հանդիպում մը կազ-
մակերպած էր Կլենտոնի Ապրիլ
գրատունը, որ տեղի ունեցաւ Յուն-
ուարի 26ին, 2017, ներկայութեամբ
շուրջ 100 հոգիի:

Իր բացման խօսքին մէջ գրա-
տան սեփականատէր եւ հանդիպ-
ման վարիչ՝ Առնօ Երէցեան, ողջու-
Ըստ հեղինակի յառաջաբան գրութեան՝ «Եկեղեցին կառուցուել է հայր եւ որդի՝ Բարսեղ եւ Սարգիս Դահբաշեանների ծախսերով եւ աշխատանքով, քանի որ հայր եւ որդի վարպետ ջրաղաց սարքողներ եւ որմնադիրներ էին: Նկատելով եկեղեցու ճակատին

ԼՈՅՍ ՏԵՍԱԾ Է ԱՐՑԱԽԵԱՆ ԳՈՅԱՄԱՐՏԻ ՋԵՐՈՍՆԵՐՈՒ ՆՈՒԻՐՈՒԱԾ «ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ ՈԳԵԿՈՉՄԱՆ» ԳԻՐՔԸ



Երեւանի մէջ լոյս տեսած է Արցախեան գոյամարտի հերոսներու կեանքին ու սիրանքներուն մասին պատմող, Արցախի ազատագրման տարեգրութիւնը ներկայացնող «Յուշամատեան Ոգեկոչման» գիրքը: Այս մասին կը տեղեկացնէ ՀՀ պաշտպանութեան նախարարութեան տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերու վարչութիւնը:

Գիրքը ստեղծուած է ՀՀ պաշտպանութեան նախարարութեան եւ ստեղծագործական յանձնախումբի երկամեայ ջանքերուն ու պրպտումներուն շնորհիւ: Ուսումնասիրուած են Արցախեան պատերազմի մասին նախորդ տարիներուն տպագրուած գրականութիւնն ու մամուլը, ՀՀ ԲՆ «Եռաբլուր» գինուորական անուշահամութիւնի, «Մայր Հայաստան» ռազմական պատմութեան թանգարանի եւ ԿԵՄ վարչութեան արխիւները: Զոհուածներու ընտանիքներու անդամներուն

դրուած ցուցատախտակին, այնտեղ միայն Սարգսի անունն է յիշատակուած, որին պիտի աւելանայ նաեւ Բարսեղի անունը: Յոյսով պատասխանատու անձինք ուշադրութիւն դարձնելով փաստերին կը կատարեն հարկ եղած սրբագրու-

եւ ազատամարտիկներուն հետ հանդիպումներու ընթացքին ձեռք բերուած տեղեկութիւններն ու յիշողութիւնները հարստացուցած ու ամբողջացուցած են գիրքը:

«Յուշամատեան»-ը ընդգրկած է բացառապէս Արցախեան պատերազմի առաջին օրերէն մինչեւ 1994-ի գինադադարը «Եռաբլուր» գինուորական անուշահամութիւնին մէջ հանգչող 559 զոհուածներու կենսագրականները:

«Յուշամատեան Ոգեկոչման» գիրքի ստեղծման իր անգնահատելի աջակցութիւնը ունեցած են սիրուեալ հայ բարերար Միքայէլ Արքունեանը, ՀՀ ԳԱԶԱ պատմութեան հիմնարկի, Երեւանի պետական համալսարանի պատմութեան բաժանմունքի ղեկավարները, «Երկրապահ կամաւորականներու միութիւն»-ը, կամաւորական ջոկատներու հրամանատարները, զոհուածներուն ընտանիքները եւ մարտական ընկերները:

ձը»:
Հետաքրքիր նոր տեղեկութիւններով գրքոյկ է մեր սիրելի դարադանցի հայրենակիցների՝ ինչու չէ նաեւ իրանի անցեալի հայաբնակ գաւառների պատմութիւնը ուսումնասիրողների համար:

ԼՈՅՍ ՏԵՍԱԾ
Յայտնի արձակագիր
ՍԱՐԳԻՍ ՎԱՅԱԳՆԻ

ԾԱՂԿԱՔԱՂ
Պատմաճընէրու

Սարգիս Վահագն

Ստանալու համար դիմել՝
«Ապրիլ», «Սարդարապատ»
«Պերճ» գրախանութները
Կամ հեղինակին՝
Sarkis Vahagn
8067 Shadyglade Ave.
North Hollywood, CA 91605
Tel. 818-504-1946
Email: sarkisvahagn@yahoo.com

MARTIAL ARTS - ORGANIZED by
GAIDZ YOUTH ORGANIZATION

1910 ԿԱՅՍ

MASTER SEVAK HAKOBYAN - 4th DAN
INTERNATIONAL MASTER OF MARTIAL ARTS
WORLD RECOGNIZED MEMBER OF ADAPTIVE SPORTS

MARTIAL ARTS
SELF-DEFENSE

SEPARATE GROUPS: MEN
WOMEN
CHILDREN
PEOPLE WITH DISABILITIES

❖ FREE for PEOPLE With DISABILITIES - GREAT RATES for FAMILIES & STUDENTS
❖ OFFICIAL OPENING & DEMONSTRATION FRIDAY, JANUARY 20, 2017, AT 5:30 PM
ADDRESS: 1060 NORTH ALLEN AVENUE, PASADENA, CA 91104
For registration and info contact Gaidz Youth Organization: 626-926-7224; email: info@gaidz.org

Instagram @Gaidzyo; Facebook Gaidz Youth Organization; Twitter @GaidzYouth

ԲՐԻՏԱՆԱՑԻ ԳԻՏՆԱԿԱՆՐ ԶԱՅԵՐԵՆ ՏԵՔՍՏՈՒՄ ԳՏԵ՛Լ Է ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵԴՈՆԱՑՈՒ ԿՏԱԿԸ

Բրիտանացի գիտնական Դեւիդ Գրանտը՝ Daily Mail-ում լույս տեսած յօդուածը սոցցանցերում արմուկ է բարձրացրել հայկական ձեռագրի լուսանկարի պատճառով, որը յօդուածում յայտնուել էր, առանց հայադիւրներին մասին յիշատակման:

Չնայած յօդուածում էլ նշուում էր, թէ ինչ լեզուով է տեքստը, որում գիտնականին յաջողուել է գտնել Ալեքսանդր Մակեդոնացու կտակը, պարբերականը լուսանկար է հրատարակել, որտեղ յատակ երեւում է, որ տեքստը հայերէն է: Հաղորդում է, որ հատուածը վերցուած է «Ալեքսանդր Մեծի պատմութիւնից»: Պատկերից դատելով՝ դա աւելի շուտ 14-րդ դարին վերագրուող «Ալեքսանդր Մեծի պատմութիւնը» հայկական ձեռագիրն է, որը հիմքում դեռեւս 5-րդ դարում թարգմանուած տեքստն է:

NEWS.am-ի հարցմանն ի պատասխան՝ գրքի հեղինակը նշեց, որ լուսանկարն ընտրել է Daily Mail-ի խմբագրութիւնը իր սեփական արխիւից, եւ այն իր գրքի նկարագարողումը է: Հեղինակը նշեց, որ ինքն իր գրքում ձիւղատակել է «Ալեքսանդր Մեծի պատմութեան» հայկական շարագրման մասին, սակայն հպանցիկ, առանց այդ թեմային մանրամասն անդրադառնալու: Նրա խօսքով՝ իր գրքում Հայաստանի մասին մի քանի յիշատակումներ կան, որոնցում նկարագրվում է Ալեքսանդրի կայսրութեան աշխարհագրութիւնը: «Ինչ վերաբերում է մատենագրութեանը, ապա այն 30 էջ է գրադրեցում իմ գրքի վերջում», - նշեց հեղինակը՝ պատասխանելով հարցին, թէ օգտագործել է արդեօք նա հայկական աղբիւրներ:



Ալեքսանդրոսն անդեգոնէ մերեւեցոց բերեկացոցն իտուէ՛: զի մեզոցե գիտացեալ լինի յառաջ բանգրուին սպանցե՛զ զինսորայ՛: որեւայնեղեցեալ փառք յաղթուած կանդաղա կորուսեալ զինեւր՛: այլ գիշերանկցոք երազայն՛: Կուցցուք տունսե՛ն սորենակ բազմութի մարդկան զիննմեզ ի շէտատաց են: զի ոչ մերկուր յաղագս լինի զորութե՛ս այլսակապէ:



Մակեդոնացու կտակը, որը գտնուել է Ալեքսանդր Մեծի պատմութիւնից: Պատկերից դատելով՝ դա աւելի շուտ 14-րդ դարին վերագրուող «Ալեքսանդր Մեծի պատմութիւնը» հայկական ձեռագիրն է, որը հիմքում դեռեւս 5-րդ դարում թարգմանուած տեքստն է:

Բրիտանացի գիտնական Դեւիդ Գրանտը յայտարարել է, որ վերջապէս գտել է Ալեքսանդր Մակեդոնացու կտակը՝ նրա մահից աւելի քան 2000 տարի յետոյ: Գիտնականը պնդում է, որ Մակեդոնիայի մահացող թագաւորի վերջին ցանկութիւնները գտել է հնագոյն տեքստում, որն այնպէս էր հարիւրամեակներ շարունակ: Իր՝ «Ալեքսանդր Մեծի կորած կտակի որոնումներում» գրքում Դեւիդ Գրանտը գրել է, որ կտակը թաքցուել է քաղաքական պատկերացումների պատճառով: Իսկական կտակը թաքցրել են նրա զենեարարները, քանի որ կտակում Ալեքսանդրն իր ժառանգորդներ է հռչակել այդ ժամանակ դեռեւս չծնուած որդուն՝ Ալեքսանդր IV-ին եւ աւագ որդուն՝ Հերակլեսին:

ՎԱՏԻԿԱՆԻ «ՍՊԻՏԱԿ ԳԻՐՔ»Ն ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՍ ԸՆԴԳՐԿՈՒԵԼ Է ԶԱՅՈՑ ՅԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՈՒՄ



ՏԱԹԵԻԿ ՍՈՒՐԱԳԵԱԼ

Վատիկանի գաղտնի արխիւներում հետազոտութիւն իրականացնող հայ գիտնական Վալենտինա Կարախանեանին, որ համալսարանական բարձրագոյն կրթութիւնից յետոյ՝ 2014 թ., աւարտել է Վատիկանի Գաղտնի Արխիւների Դպրոցը, յաջողուել է պատմական արժէքաւոր բացայայտումներ կատարել Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ: Վերջինս տեղեկութիւններ է հաւաքագրել այն մասին, թէ ինչպէս է Հռոմի Բենեդիկտոս 15-րդ Պապի Կոստանդնուպոլսի պատուիրակը՝ մոնսինիոր Անջելո Մարիա Դոլչին, տեղեկացել է Հայոց Ցեղասպանութեան մասին փորձել դադարեցնել այն, թէեւ այսպիսով: Մոնսինիոր Դոլչին, կայսրութեան տարբեր քաղաքներից ու գիւղերից բազմաթիւ նամակներ ու հեռագրեր ստանալով, ոչ թէ վերաշարադրել է դրանք, այլ պահպանել է բնօրինակները եւ ուղարկել Վատիկան: Այդ դժուարին օրերին պատվիրակին յաջողուել է հանդիպումներ ունենալ մի շարք նախարարների, դիւանագիտական ներկայացուցիչների եւ նոյնիսկ սուլթանի հետ՝ ներկայացնելով Հռոմի Պապի ստորագիր նամակը: Վ. Կարախանեանի համոզմամբ՝ այդ թուականներին Վատիկանը, ի դէմս մոնսինիոր Դոլչիի, արել է ամէն հնարաւոր եւ անհնարինը՝ կանխելու արիւնալի ջարդը:

Օսմանեան կայսրութիւնում հայերի նկատմամբ իրականացուող ջարդի մասին համապարփակ տեղեկութիւններ, կրում է «Սուրբ Աթոռը եւ հայերի ջարդը Օսմանեան կայսրութիւնում» վերնագիրը: Փաստագրական նիւթերը վերցուել են Վատիկանի գաղտնի արխիւից, ինչպէս նաեւ Վատիկանի պետքարտուղարութեան արխիւից, որոնք կարող են բացուել բացառապէս Հռոմի Պապի անմիջական թուղութեամբ: Ցատկանշական է, որ գրքի մէջ երբեք չի յիշատակուում «ցեղասպանութիւն» եզրույթը:

Վերոնշեալ հետազոտութիւնների հիման վրայ 2016 թ.-ին՝ Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի Հայաստան այցից մի քանի օր առաջ, լոյս տեսաւ մինչ այդ նախադէպը չունեցող մի աշխատութիւն, որի մէջ փաստաթղթերն այնպիսի հերթականութեամբ են դասաւորուած, որ ինքնին պատմում եւ փաստում են հայերի կոտորածի մասին: Գիրքը, որն ընդգրկում է 1914-1918 թթ.

«Ինձ յաճախ են հարցնում՝ ինչու՞ գրքի մէջ չի նշուում «ցեղասպանութիւն» բառը: Պատճառն այն է, որ 20-րդ դարի սկզբին այդ եզրույթը դեռեւս գոյութիւն չուներ, եւ մենք այդ մասին նշում ենք գրքի նախաբանի մէջ», - «Արեւելքի» հետ զրոյցում պարզաբանում է հեղինակը:

Գրքի մէջ նշուում է նաեւ մինչ այդ երբեք չթողարկուած «Սպիրտակ գրքի» մասին, Վատիկանի շրջաբերականը՝ ուղղուած Վատիկանի դեսպանութիւններին: Այնտեղ մասնաւորապէս ընդգծուած են Վատիկանի պետական բոլոր դիրքորոշումները, որոնք վերաբերում էին Առաջին համաշխարհային պատերազմին, սակայն յատկանշական է, որ գրքի մի ամբողջ գլուխ էլ յատկացուած է հայերին ու Հայոց Ցեղասպանութեանը: Հայերին նուիրուած գլխում յստակօրէն նշուում է, որ Սուրբ Աթոռը պետք է գործունէութիւն ծաւալի՝ փրկելու հայերին:

Ինչպէս նշում է հեղինակը՝ Վ. Կարախանեանը, մօտ ապագայում մտադիր են գիրքը հայերէն թարգմանել: Առաջարկներ են եղել նաեւ թարգմանելու գիրքը անգլերէն, արաբերէն, լեհերէն, ռուսերէն, ֆրանսերէն, իսպաներէն եւ արեւմտահայերէն:

միւսները. Մայր տաճարը, որի եռաչափ վերականգնումը դեռ ընթացքում է, Ամենափրկիչ եկեղեցին, Կուսանաց եկեղեցին, Գազկաշէնը, Բազմախորանը եւ ոչ միայն: «Այժմ մենք վերականգնում ենք նաեւ այն եկեղեցիները, որոնք ամբողջովին գետնին են հասարակուել: Սակայն մեր հիմնական նպատակը՝ ստանալ Անի քաղաքի եւ նրա շրջակայքի ամբողջական պատկերը», նշեց մեր զրուցակիցը: Ֆրանզեանի խօսքով, նախքան

աշխատանքները սկսելը, ինչպէս նաեւ դրանց ընթացքում, մի շարք նիւթեր են հետազոտուել, ուսումնասիրուել է պատմութիւնը, հասկանալու համար, թէ ինչպիսին է եղել հայկական այդ քաղաքը մի քանի հարիւրամեակ առաջ: Մասնագէտները աշխատում են ԺԱ.-ի. դարի պատմական հետազոտութիւնների եւ արդէն իսկ պատրաստի գծագրերի հիման վրայ, ինչպէս նաեւ այն ժամանակաշրջանի

ԶԱՅ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԸ ՎԻՐՏՈՒՄ ԿԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ԵՆ ԶԱՅԿԱԿԱՆ ԱՆԻՆ

ԱՆԻ ԼԻՊԱՐԻՏԵԱՆ

Հայկական Անի քաղաքն այժմ գտնուում է ժամանակակից Թուրքիայի տարածքում: Համանուն թագաւորութեան մայրաքաղաքն այսօր, ցաւօք, աւելի շուտ յայտնի է ոչ թէ իր պատմութեամբ, այլ աւերակներով: Հայերն այդպէս էլ ասում են՝ Անիի աւերակները: Անի քաղաքի ու նրա շրջակայքի եռաչափ մոտելաւորմամբ, հայկական պատմական եւ մշակութային յուշարձանների եռաչափ (3D) մոտելաւորող, վերակազմող Պարգեւ Ֆրանզեանն ու իր գործընկերները սկսեցին գրադրուել դեռ տաս տարի առաջ: «Sputnik Արմէնիա»-ին տուած հարցազրոյցում Ֆրանզեանը պատմեց վիրտուալ վերաստեղծման աշխատանքի նրբութիւնները, ինչպէս նաեւ գործընթացի ստացած իր սպաւորութիւնների մասին: «Ես ու գործընկերներս 15 տարի

առաջ սկսեցինք քննարկել եռաչափ մոտելաւորման գաղափարը եւ 10 տարի առաջ սկսեցինք այն իրագործել: Այդ ընթացքում մեզ յաջողուեց վիրտուալ կերպով վերականգնել շուրջ 20 հայկական եկեղեցի: Հիմնականում մենք գրադրում ենք այն պատմական յուշարձաններով, որոնք գտնուում են Հայաստանից դուրս», նշեց Ֆրանզեանը: Տիգրայները պատմեց, որ հայ մասնագէտների մի խումբը աշխատում է կամուրջների, եկեղեցիների, պալատների, քարաւանատների եւ այն ամէնի վերականգնման վրայ, ինչը պատմամշակութային ժառանգութիւն է համարուում: 2009-ին թիւրք սկսել է Անի քաղաքի վիրտուալ վերականգնումը: Սկզբում ուշադրութեան կեդրոնում հիմնականում այն եկեղեցիներն էին, որոնց մասին շատ է խօսուում, եւ դրանք աւելի յայտնի են, քան

ՍՈՒՐԲ «ՎԱԼԵՆՏԱՅՆ»-Ի ՍԻՐՈՅ ԱՌԱՍՊԵԼԸ

ՊՕՐՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

«Վալենտայնի Օր»-ուայ եւ նրա ջատագովի պատմութիւնը վարագոյրուած է խորհրդաւորութեամբ: Փետրուար ամիսը նախկինում տօնախմբուել էր որպէս վիպերգութեան ամիս: «Սուրբ Վալենտայնի Օր»-ը, ինչպէս որ հիմա գիտենք, պարունակում է քրիստոնէական եւ հին Հռոմէական ասանդութեան հետքեր: Սակայն, ով էր «Սուրբ Վալենտայնի»-ը եւ այն ինչպէս էր զուգորդուել նախնի ծէսերի հետ:

Տարեկան, մօտաւորապէս մէկ միլիարդ «Վալենտայնի»-ի օրուայ բացիկներ են փոխանակուած, Մոնոնգի տօներէից յետոյ, այն երկրորդ ամենաշատ ժողովրդական բացիկներ ուղարկելու տօնախմբութեան օրն է:

Կատոլիկ եկեղեցին առնուազն ճանաչում է երեք տարբեր «Վալենտայնի» անուանուած սուրբեր, որոնց բոլորը գոհուած են: Մի առասպել աւանդում է, որ «Վալենտայնի»-ը եղել է մի քահանայ, որը երրորդ դարի ընթացքում ծառայել է Հռոմում: Երբ Կլաուդիոս կայսրը որոշել էր, որ ամուրի մարդիկ աւելի լաւ գինուորներ են լինում, քան ամուսնացած ու ընտանիք ունեցողները: Նա արգելել էր երիտասարդ մարդկանց ամուսնութիւնը: «Վալենտայնի»-ը գիտակցելով այդ հրամանագրի անարդարութիւնը, անգոսնել էր Կլաուդիոսի հրամանագիրը եւ շարունակել գաղտնի կատարել երիտասարդ մարդկանց ամուսնական արարողութիւնները: Երբ «Վալենտայնի»-ի գործողութիւնները բացայայտուել էին, Կլաուդիոս կայսրը հրամայել էր նրան մահուան դատապարտել:

Ուրիշ պատմութիւններ են թաղարում են, որ «Վալենտայնի»-ը կարող էր սպաննուած լինել, փորձած լինելով օգնելու Հռոմէական դաժան բանտերից քրիստոնէաների փախուստը կազմակերպել, որտեղ նրանք յաճախ երթարկուում էին ծեծի ու տանջանքների: Ուրիշ մի առասպելի համաձայն, բանտարկուած մի «Վալենտայնի», ուղարկել էր առաջին իրական «Վալենտայնի» ողջոյնը, մի երիտասարդ աղջկայ հետ սիրահարուելուց յետոյ: Հաւանաբար այն կարող էր եղած լինել իր բանտապետի աղջիկը, որը բանտարկութեան ատեն այցելել էր իրեն: Ենթադրում է, որ մահուանից առաջ նա նամակ էր գրել նրան, ստորագրելով՝ «Քու Վալենտայնի»-ից, մի արտայայտութիւն, որը այս օրերին էլ գործածուում է:

Ամենայնդէպս, «Վալենտայնի»-ի մասին առասպելի ճշմարտութիւնը աղօտ է: Նրա մասին բոլոր պատմութիւնները շեշտում են իր կատարած կոչը որպէս հերոսական ու համակրելի արարք եւ առաւել մեծութիւն ունեցող առասպելական անձնաւորութիւն: Մինչեւ «Միջին Դարեր» թերեւս որպէս շնորհակալութիւն իր հեղինակութեանը, «Վալենտայնի»-ը Անգլիայում ու Ֆրանսիայում եղել էր ամենա ժողովրդական սուրբը:

Ոմանք հաւաստում են, որ «Վալենտայնի Օր»-ը տօնախմբել էին Փետրուար ամսուայ կէսերին, յիշատակելու համար նրա մահուան կամ թաղման տարեկիցը, որը պատահել էր մ.թ. 270 թուականին: Ուրիշներ կարծում են, որ քրիստոնէական եկեղեցին կարող էր որոշած լինել Սուրբ «Վալենտայնի»-ի տօնախմբութեան օրը տանել Փետրուարի կէսին, ջանադրուելով «Քրիստոնէացնել» Լուպերկալիա»-ի հեթանոսական տօնախմբութիւնը: Լուպերկալիա-ի փետրուարի 15-ի տօնախմբութիւնը, բարեբերութեանը նուիրուած տօնախմբութիւն էր, նուիրուած Ֆաունուս անունով Հռոմէական երկրագործութեան աստծոյն, ինչպէս նաեւ Հռոմի հիմնադիրներ՝ Ռոմուլուսին ու Ռեմուսին:

Համաձայն Հռոմի քահանաների հրահանգի, տօնախմբութիւնը սկսելու համար, «Լուպերգի»-ի անդամները պիտի համախմբուէին սրբացուած մի քարայրում: Հաւատում էին, որ Հռոմի հիմնադիրներ՝ Ռոմուլոս ու Ռեմուս երեխաները այնտեղ էին խնամուել «Լուպա» էր գալլի կողմէր: Քահանաները այժմ էին գոհարեւում՝ բերրիութեան եւ մի շուն մաքրագործութեան համար: Նրանք մաշկագերծում էին այծին, ընկղմում նրանց արեան մէջ, տանում փողոցներ, այծի կաշիով փափուկ դիպչելով կանանց եւ հունձքի արտերին: Անվախ Հռոմէացի կանայք ողջոյնում էին նրա հպումը իրենց մարմիններին, որովհետեւ հաւատում էին, որ այն յաջորդ տարում իրենց աւելի արգասաբեր կը դարձնէր: Առասպելի համաձայն, օրուայ վերջին, քաղաքի բոլոր երիտասարդ կանայք իրենց անունների սալիկները դնում էին մի խոշոր սափորում: Քաղաքի իւրաքանչիւր ամուրի տղամարդ ընտրում էր մի անուն, որը դառնում էր տարուայ իր ընտրած գոյգը: Այդ զուգորդութիւնը յաճախ վերջանում էր ամուսնութեամբ:

«Լուպերկալիա» գոյատեւել էր քրիստոնէութեան սկզբնական զարթօնքին, սակայն օրինազրկուել էր, համարուելով որպէս ոչ քրիստոնէական: Հինգերորդ դարի վերջին էր, որ Հռոմի Գելասիոս պապը Փետրուարի 14-ը յայտարարել «Վալենտայնի Օր»: Ծատ ուշ էր, որ այդ օրը հաստատապէս զուգորդուել էր սիրոյ հետ: Միջին դարերի ընթացքին հաւատացել էին, որ Ֆրանսիայում ու Անգլիայում Փետրուարի 14-ը թռչունների բեղմնաւորման շրջանն էր, որը յարել էր այն գաղափարին, որ նոյն ամսուայ «Վալենտայնի Օր»-ուայ կէսին էր, որ պիտի լինէր ռոմանտիկ օր:

«Վալենտայնի» ողջոյնը ժողովրդական սովորութիւն էր՝ մինչեւ իսկ Միջին դարեր: Այնուամենայնիւ «Վալենտայնի» գրաւոր ողջոյն էր եղել մինչեւ 1400 թուականը: Ամենահինը ճանաչուած «Վալենտայնի Օր»-ը, որը տակաւին գոյութիւն ունի, գրուած էր 1415 թուականին Օրլէանի Չարլզ Դ-ի կողմից՝ ուղղուած իր կնոջը, Լոնդոնի Աշտարակում իր բանտարկութեան ատեն: Հաւաստում են, որ Հէնրի Հինգերորդը, մի գրագիր էր վարձել, շարադրելու համար մի «Վալենտայնի» գիրը, ուղղուած Վալուա Կաթէրինին:

Միացեալ Նահանգների հետ միասին «Վալենտայնի Օր» տօնախմբում են նաեւ Կանատայում, Մէքսիկոյում, Անգլիայում, Ֆրանսիայում եւ Աւստրալիայում: Անգլիայում «Վալենտայնի Օր» ժողովրդային տօնախմբութիւնը սկսել էր կատարուել տանրեթեօթերորդ դարում:

Տասնութ դարի կէսերին, սովորութիւն էր եղել հասարակութեան բոլոր խաւերի համար փոխանակել ձեռքով գրուած խանդաղատանքի փոքրիկ բացիկներ: Հազար իննհարիւր թուականներից սկսած, տպագրուած քարդեր սկսել էին փոխել բացիկներին, աւելի դիւրին ու գաղտնի արտայայտելու համար իրենց զգացումները: Աւելի աժան նամակատան ծախսերը նաեւ նպաստել էին «Վալենտայնի Օր» ողջոյններ ուղարկելու ժողովրդականութեան աւելացումը:

Ամերիկացիները հաւանաբար 1700-ականներին էին սկսել ձեռքով գրուած «Վալենտայնի» ողջոյնները: 1840 թուականին էսթեր Հաուլին մասսայական արտադրուած «Վալենտայնի»-ները: Այս օրերին, համաձայն ողջոյնի քարդեր արտադրող ընկերակցութեան տեղեկութեան, մօտաւորապէս մէկ բիլիոն «Վալենտայնի Օր» քարդեր են ուղարկուում իւրաքանչիւր տարի, այն վերածելով տարուայ երկրորդ մեծագոյն քարդ ուղարկելը, Քրիստոսի Մոնոնգին 2,6 պիլիոն քարդ է ուղարկուում: Կանայք, գնում են մօտաւորապէս բոլոր «Վալենտայնի» քարդերի 85 տոկոսը:

Մարդկային ցեղի (Հատ Դարուինի, ցեղեր չեն եղել, մարդկութիւնը միայն մէկ ցեղից է բազմացել) արդէն իմաստացած (Homo Sapien) մարդիկ, բնութեան տարբեր երեւոյթներին պաշտամունք էին նուիրել, դեռեւս չկարողանալով իմաստաւորել այն եւ նրա փառաբանման տօնախմբութիւններ էին կատարել: Մարդու զարգացման ամենա բարձր աստիճանը սիրելու զգացումն է, սիրել ոչ միայն հակառակ սեռի ներկայացուցիչին, այլ սիրել... իրապէս անբացատրելի գիտակցական զգացողութիւն է, եթէ թուրք սիրել


կարողանար՝ սպաննած մանուկների ու մարդկանց շուրջը պար չէր գայ: Առասպելականացած «Վալենտայնի», սիրոյ լոյս հոսեց մարդկանց սրտերին, այն լցրեց բարութեամբ, անեղծ սիրով, գոնէ մի օր աշխարհի մարդիկ իրար սիրում են: Ասոյթ՝ «Գեղեցկութիւնը կը փրկի աշխարհը», չէ, այն ճշմարիտ է, գեղեցկութիւնը գեղագիտական զգացողութիւն է, մարդ գեղեցիկին է ձգտում, իր մտքի անբացատրելի հրաշքով «Գեղեցիկ»-ը զգալու իմացութիւն է շնորհուել նրան, ինչն է գեղեցիկ, ինչո՞ւ է այն գեղեցիկ: Ամենայնդէպս «Գեղեցկութիւնը» աշխարհ չի փրկի, մարդիկ այն հրաշք են համարում, երկնքում կամար կապած եօթ գոյների գօտին հրաշք է՞, մայրը հրաշք է՞, ծառը հրաշք է՞, «Վալենտայնի»-ը հրաշք է՞, այն առասպել է, իմացի՞ր՝ սիրող սրտեր իրար շղթայելու համար կեանքն էր գոհել...: Չէ, «Մէ՛րը, բարութիւնը աշխարհը կը փրկէ»: Այն քարոզելով չի լինում, մարդու միտքը պիտի առաւել զարգանայ, որ իր նմանի ցաւը զգայ, անօթի մանուկին սնուցի, թուրքի միտքը երբ սկսի ուրիշի ցաւը կարողանայ զգալ, ցաւից կը լացի, ծաղիկների խուրճը թեւերին, լացակուած ծուկի կը դայ նրանց հոգիներից ճառագած լոյսի առաջ...: Չէ, քարոզելով ու տարբեր կրօնքներով չես կարող փոխել մարդուն, ահա Մեծն Դարուինի եղափոխութեան տեսութեան ճշմարտութիւնը, մարդու միտքը պիտի ենթարկուի նրա եղափոխութեան բնական զարգացմանը... Է՛հ ասում են որ արեւը դեռեւս հինգ միլիարդ տարիներ պիտի լուսաւորի մեզ, ինչքան «Վալենտայնի»-ները զալու են իրենց հրաշքով սիրոյ ու բարութեան լոյս վառելու եղափոխուած մարդկանց սրտերին...:

Հետաքրքրուած եմք իրենց փոխարժեքով ստանալ՝

- Հայկական երգարաններ
- Կիլիկիոյ պատմական գիրքեր
- Ցեղասպանութեան հետ առնչուած գիրքեր

Եթէ ունիք նման գիրքեր եւ կը փափաքիք զանոնք վաճառել, կը խնդրենք մեզի հետ կապ հաստատել հեռաձայնելով կամ e-mailով՝ **ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆԻՆ:**

Vahe Atchabahian
 1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
Tel: 626-354-5924
 vamedia@yahoo.com



ՔՆԱՆԱԼՈՒ ԿԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՈՂ ԴԵՂԵՐՈՒ ԴԵՏԵԻԱՆՔՆԵՐԸ

Քնանալու դժուարություններն ունեցող մարդոց մաս ընդհանրացած երեւոյթ է քնաբեր դեղահատերու օգտագործումը՝ յաճախ առանց մասնագետ բժիշկի թելադրութեան: Այս գծով ամէնէն շատ օգտագործուած դեղերն են՝ անդիզոլինը և դեղերը, որոնք կ'արգելափակեն ասիտալզոլինի աշխատանքը ուղեղին մէջ: Որպէս արդիւնք՝ անհատը կրնայ դիւրութեամբ քնանալ: Սակայն այս դեղը նաեւ ունի կողմնակի ազդեցութիւններ, որոնցմէ ամէնէն հաւանականներն են՝ ստամոքսի եւ աղիքներու պրոլապսիսները, մարսողութեան դժուարութիւնը, աչքի եւ բերանի չորութիւնը:

Ամերիկացի գիտնական Շէլլի Կրէյքի գլխավորութեամբ կատարուած հետազոտութիւնը ցոյց կուտայ, որ անդիզոլինը քնաբեր դեղեր կրնան նաեւ ժխտական ազդեցութիւն ունենալ ուղեղի առողջութեան վրայ: Կրէյքի իր ուսումնասիրութեան արդիւնքներուն վրայ

հիմնուելով կը շեշտէ թէ մարդիկ պէտք է խուսափին դեղեր օգտագործելէ առանց բժիշկի խորհուրդներուն դիմելու:

Եօթը տարուան վրայ երկարող Կրէյքի հետազոտութիւնը պարզած է, թէ՛ անդիզոլինը քնաբեր դեղերը առնչուած են dementia-ի եւ alzheimer's-ի հետ: Որքան բարձր ըլլայ դեղաքանակը այնքան կը բարձրանայ այս անհանգստութիւններէն տառապելու հաւանականութիւնը:

Կրէյք կը նշէ թէ դեղաքանակի կողքին նաեւ մեծ դեր ունի դեղերու օգտագործման ժամանակամիջոցը: Ուսումնասիրութիւնը ցոյց տուած է, թէ՛ երեք տարիներու վրայ անդիզոլինը դեղերու օգտագործումը կրնայ 15-էն 30 առ հարիւր համեմատութեամբ բարձրացնել dementia-ի հաւանականութիւնը: Նշենք, որ այս ուսումնասիրութեան մաս կազմած են աւելի քան 3,500 կամաւորներ:

ՇՈՒՏ ՅՈԳՆԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Միայն քունի պակասը չէ, որ կը վատնէ ձեր ուժը: Նոյնիսկ աննշան գործողութիւնները կրնան հիւստի ձեզ թէ՛ մարմնապէս, թէ՛ մտովի:

Գիտնականներու կարծիքով՝ կան շարք մը վատ սովորութիւններ, որոնք կը յոգնեցնեն ձեզ: Անոնք ներկայացուցած են ապրելակերպի քանի մը փոփոխութիւն, որոնք կրնան վերականգնել ձեր ուժերը:

Յոգնած ժամանակ մի՛ խուսափիք մարմնամարզութենէն: Ձեր ուժը ինչպէս կ'աւելնայ մարմնամարզութիւնը ցոյց տուած են, որ նստակեաց կեանքով ապրող առողջ չափահասները, որոնք սկսած են շաբաթը երեք օր ընդամենը 20 վայրկեան մարմնամարզութեամբ զբաղուիլ, վեց շաբաթ ետք աւելի քիչ յոգնութիւն զգացած են:

Կանոնաւոր վարժութիւնները կը բարելաւեն սրտանօթային համակարգի աշխատանքը, թթուածին եւ սննդարար նիւթեր կը փոխանցեն ձեր հիւսկէններուն:

Բաւականաչափ ջուր չիւմելը նոյնպէս կ'ազդէ ձեր ուժին վրայ: Զրգարկումը կը տանի արեան քանակի նուազումին, որ կը խտացնէ արիւնը: Անիկա սրտին կը ստիպէ նուազ արդիւնաւէտօրէն աշխատիլ՝ դանդաղեցնելով արագութիւնը, որ անհրաժեշտ է գործարաններուն եւ մկաններուն թթուածին ու սննդարար նիւթեր մատակարարելու համար:

Մեծ է դերը նաեւ երկաթին: Երկաթի պակասը կը ստիպէ մարդուն ջղաջանալ, թոյլ զգալ եւ կորսնցնել կեդրոնական կարողութիւնը: Դուք կը յոգնիք, քանի որ ձեր մկաններն ու օրկանները բաւականաչափ թթուածին չեն ստանար: Ձեր ճաշացանկին աւելցուցէք երկաթով հարուստ ուտելիք, որպէսզի կանխարգիլէք անեմիան, սնունդի մէջ ընդգրկեցէք հորթի միս, լուբիա, հակիթ, գոց կանաչ բանջարեղէն, ընկուզեղէն, խնձոր, գետնանուշի կարագ եւ այլն: Նաեւ կերէք մեծ քանակութեամբ C կենսանիւթ պարունակող ուտելիքներ՝ քիուրի, բնական հիւթեր եւ այլն:

Կատարեալ ըլլալու ցանկութիւնը նոյնպէս ձեզ կը ստիպէ աւելի տքնաջան եւ երկար աշխատիլ, քան անհրաժեշտ է: Գիտնականներու կարծիքով՝ պէտք է յատուկ ժամեր սահմանուին ձեր ծրարներուն համար: Հրաժարեցէք լուս փող դարձնելու սովորութենէն:

Լարուածութիւնը կրնայ ձեզ կաթուածահար ընել եւ ստիպել յոգնիլ մտովի: Այս ամէնէն ազատելու համար անհրաժեշտ է զբաղիլ մարմնամարզութեամբ, մտախոհութեամբ (meditation). ընկերոջ հետ բաժնեցէք ձեր անհանգստութիւնները եւ փորձեցէք աւելի իրատես ըլլալ: Անպայման նախաձայնեցէք: Մի աշխատիք արձակուրդի մէջ եղած ժամանակ, իսկ քնանալու ժամերուն մի ստուգէք ձեր ելեկտրոնային նամակները:

ԻՆՉՊԵՍ ՔՆԱՆԱԼ ԺԱՄԱՆԱԿԻՆ, ԵԹԷ ՔՆԱՆԱԼՈՒ ՓԱՓԱՔ ԶԿԱՅ

Կրկնութեան ձեւով լինենք, որ փշրեցին քունը անհրաժեշտ է մարդուն համար: Սակայն երբեմն այնպէս կը պատահի, որ մարդ կը պառկի, իսկ քնանալ չի կրնար ու կը սկսի ժամանակը ծախսել մէկ կողմէն միւսը դառնալով:

Այսպիսով, ինչպէս աւելի արդիւնաւէտօրէն պատրաստուիլ քնանալուն՝ նման խնդիր չունենալու համար:

- Քնանալէ առաջ պէտք չէ կլանուած հեռախօսի դիտել կամ գիրք կարդալ: Ասոնք կ'աշխուժացնեն ուղեղին աշխատանքը:

Ճիշդ պիտի ըլլայ մաքուր օդին քալելը կամ հանգիստ երաժշտութիւն լսելը:

- Քնանալ ցանկալի է ամէն օր նոյն ժամուն:

- Պէտք է, ի հարկէ, հաշուի առնել մարմնի անհատական առանձնայատկութիւնները, այսուհանդերձ քնանալէն առաջ թեթեւ մարզանքը պիտի օգնէ շուտ քուն մտնելու:

- Քնանալէ առաջ պէտք չէ վերջին քանակը օգտագործել, որոնք ստիպուած էիք վերապրիլ օրուան ընթացքին:

Սենեակի օդափոխումը միայն պիտի օգնէ շուտ եւ հանգիստ քնանալուն:

- Կայ տեսակէտ, որ մտքին մէջ հաշուելը կ'օգնէ շուտ քնանալու, սակայն իրականութեան մէջ այդպէս չէ: Հաշուելը կ'աշխուժացնէ ուղեղը:

- Եթէ այսուհանդերձ քնանալ չէք կրնար, աւելի լաւ է դուք ձեզ զբաղեցնէք որեւէ կարեւոր գործով:

ԻՆՉՊԵՍ ՈՐՈՇԵԼ ԲՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԳԻԾԵՐԸ ԱՐՏԱՔԻՆԻ ՄԻՋՈՅՈՎ

Յայտնի փաստ է, որ մարդու մասին շատ բան կ'ըսեն անոր ժեստերը-շարժումները: Բայց անգամ չիմանալով ժեստերու լեզուն, կարելի է բնութագրել մարդիկ՝ անոնց արտաքին տեսքին միջոցով:

Պարանոց- Կարճ պարանոցը կը խօսի մարդու կամակորուժեան եւ անհեռատեսութեան մասին, իսկ երկար պարանոց սովորաբար կ'ուսնենան մեղամարտ բնավորութեան մարդիկ: Հաստ պարանոցը կը խօսի մարդու անվախ ըլլալու մասին:

Իսկ բարակ պարանոց ունեցողները կարելի է համարել ուսման թիկ եւ ամբիտ:

Ուսեր- խօսելու ընթացքին ուշադրութիւն դարձուցէք մարդու ուսերուն վրայ: Եթէ մարդու ուսերը նեղ են, ուրեմն այդ անձը ամբիտ է: Լայն ուսերը կը խօսին այն մասին, որ անձը չափազանց քաջ է: Ասոնք յաճախ վստահութիւն կը ներշնչեն շրջապատին:

Ազդեր- խոշոր եւ լայն ազդերը սովորաբար կը խօսին չզիջող անձի մասին: Կլոր ազդերը ունեցողները մեծ մասամբ փափուկ են եւ կամք չունեցող: Իսկ նեղ ազդերը կը խօսին ուժեղ բնավորութեան եւ դիմացկունութեան մասին: Ի դէպ, երկար, գեղեցիկ ոտքերը կը խօսին այն մասին, որ մարդը ունի իր նպատակներուն հասնելու ունակութիւն:

Ճակատ- խելացի մարդիկ կ'ուսնենան երկար եւ քիչ մը փոքր առաջ եկած ճակատ: Իսկ նեղ ճակատ ունեցողները կ'առանձնան բռնկունութեամբ: Եթէ մարդու ճակատը քառակուսի է, ուրեմն

գործ ունիք ազնիւ մարդու հետ: Յօնքեր- բարակ յօնքերը կը խօսին գոռոզ բնավորութեան մասին: Խառն աճած յօնքերը՝ դաժանութեան եւ կոպտութեան մասին, իսկ հաստ յօնքերը՝ պարզութեան եւ անկեղծութեան մասին:

Աչքեր- խորունկ աչքերը կը բնութագրեն ժլատ եւ կախեալ մարդիկ: Լայն բացուած աչքերը կը վկայեն պերճախօսութեան մասին, ինչպէս նաեւ՝ հետաքրքրասիրութեան: Նեղ աչքերը կը խօսին դաժան անձի մասին:

Քրիթ- սուր եւ երկար քրիթը կը խօսի խստութեան եւ բռնկողականութեան մասին: Անլուրջ եւ քմահաճ մարդոց յատուկ է քիչ մը վեր ցցուած քրիթը:

Մեծ, հաստ քրիթը կը խօսի մարդու դաժանութեան մասին:

Բերան- փոքր բերան սովորաբար կ'ուսնենան թոյլ բնավորութիւն ունեցող մարդիկ: Եթէ անձի վերին շրթունքը քիչ մը մեծ է ներքեւինէն, ուրեմն ան իսկական անձնասէր է: Եթէ ներքեւի շրթունքը աւելի մեծ է, ուրեմն ան սովոր է կեանքէն ստանալ ցանկալին: Նեղ շուրթերը կը խօսին փակուածութեան մասին: Մեծ շուրթերը կը խօսին մարդու քաջութեան մասին:

Ծնօտ- ուժեղ մարդիկ, որոնք ինքնուրոյն կը հասնին իրենց նպատակներուն, յաճախ կ'ուսնենան մեծ եւ լաւ արտայայտուած ծնօտ: Համեստ եւ անվստահ մարդոց առաւել բնորոշ է փոքր եւ չարտայայտուած ծնօտը:

Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.

ԿԱՆՈՒՄ ՔՆԱՆԱԼՈՒ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆԸ ԿՕԳՆԵ ԸՆԾԵԼՈՒ ԲԱՅԱՍԱԿԱՆ ՄԻՏՔԵՐԸ

Հետազոտութիւնները ցոյց տուած են, որ մարդիկ, որոնք սովորութիւն ունին ուշ քնանալու եւ որոնց քունը ընդհատուող է՝ աւելի յաճախ կը տառապին բացասական միտքերէն քան այն մարդիկ, որոնք կանուխ կը քնանան:

Հետազոտութեան նպատակը եղած է ուսումնասիրել կապը քնանալու ժամի եւ կազուէն բացասական միտքերու միջեւ:

Հեղինակները կրկնուող բացասական միտքերը կը բնորոշեն իբրեւ վերացական կրկնուող միտքեր՝ բացասական փորձի եւ անձնական խնդիրներու շեշտադրութեամբ, որոնք դժուար է կառավարել:

Այսպիսի միտքեր ունեցող մարդիկ սովորաբար շատ անհանգստացած են իրենց անցեալով կամ ապագայով, իսկ այդ կապը միտքերը կրնան չափազանց յոգնեցուցիչ ըլլալ:

Հետազոտութիւնը կատարե-

լու համար հեղինակները խնդրած են համալսարանի 100 ուսանողէ ամբողջացնել քանի մը հարցաթերթիկ եւ երկու համակարգչային առաջադրանք, որոնցմով կը ստուգէին տապալակ, բացասական միտքերու աստիճանը եւ յաճախակիութիւնը: Հաշուի առնուած էր նաեւ քնանալու ժամը, ուսանողը բժշկի թէ՛ արտոյտ:

Պարզուած է, որ ուսանողները, որոնք աւելի ուշ եւ քիչ կը քնանան՝ ունին աւելի շատ կրկնուող բացասական միտքեր:

Ըստ հեղինակներուն՝ արդիւնքները ցոյց տուած են, որ ոչ լիարժէք քունը կրնայ կապուած ըլլալ բացասական մտածողութեան զարգացման հետ, եւ կրկնուող բացասական միտքերու հետ կապուած հոգեկան շեղումներով մարդիկ պէտք է փոխեն իրենց քունի ժամերը եւ փորձեն քնանալ աւելի կանուխ եւ աւելի երկար ժամանակ յատկացնեն քունին:

Ձեր Ծանուցումները Կատարեցէք «Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 massis2@earthlink.net

www.massispost.com

Սերժ Սարգսեանից Նեղացածները

Շարունակուած էջ 2-էն

հատականների համար:

Ս. Սարգսեանի կողքին չէ իշխանութեան առանցքային եւս մէկ դէմք՝ Գագիկ Խաչատրեանը, որ երկար տարիներ զբաղեցրել է ՊԵԿ նախագահի, յետոյ նաեւ ՀՀ Ֆինանսների նախարարի պաշտօնը: Գ. Խաչատրեանը պաշտօնի բերումով տիրապետում է լրջագոյն ինֆորմացիայի՝ իշխանութիւնների բիզնեսի, մութ գործարքների, տնտեսութեան ստուերի եւ այլնի մասին: Չնայած հիմա Գ. Խաչատրեանին սահուն ունեզրկելու օպերացիա է սկսուել. նրան պատկանող ընկերութիւնների մասնաբաժնի մի մասը անցել է Ս. Սարգսեանի փեսայ Մ. Մինասեանին: Ի դէպ,

շատ շուտով Ս. Սարգսեանից նեղացածների շարքում կը յայտնուի նաեւ վարչապետ Կարէն Կարապետեանը: Նա համաձայնել էր ստանձնել այդ պաշտօնը երկարաժամկետ կտրուածքով, որպէսզի ինքը լինէր նաեւ Ս. Սարգսեանի իրաւալաջողորդը: Այնինչ՝ հիմա պարզուած է, որ Կ. Կարապետեանը հաւանաբար չի կարողանայ պաշտօնավարել 2018թ. Ապրիլից յետոյ, երբ ամբողջովին ուժի մէջ մտնի նոր Սահմանադրութիւնն ու վարչապետից պահանջուի 4 տարուայ մշտական բնակութեան վայրի ցենզ: Ինչեւէ, այսքանից յետոյ կարելի է ենթադրել, որ իշխանութիւններն Աժ ընտրութիւններին ընդառաջ՝ լուրջ խնդրի առաջ են կանգնած: «ԺՈՂՈՎՈՒՐ»

ՍԻՆ ԽՈՍՏՈՒՄՆԵՐ (Բ)

Շարունակուած էջ 7-էն

թիւնը, ստեղծելով վստահութեան մթնոլորտ, անցեալին գործուած սխալները միասնաբար սրբագրելու առաջադրանքով:

Անգամ մը եւս կ'արժէ յիշատակել եւ թարմացնել մեր յիշողութիւնը, թէ երբ գերպետութիւններ յաղթական դուրս եկան Առաջին համաշխարհային պատերազմէն, յայտարարեցին որ պատժական դատարաններու առջեւ պիտի քաշեն պատերազմին հեղինակներն ու ոճրագործները: Առաջինը եղաւ Ֆրանսան, որ անմիջապէս 2 Սեպտեմբեր 1914-ին մասնաւոր յանձնախումբ մը կազմեց, որուն պաշտօնը պիտի ըլլար հետապնդել ոճրային արարքները: Ազդարարեցին նաեւ Բարձրագոյն Դրան, որ դաշնակից պետութիւնները գործուած ոճիրներուն համար պատասխանատու պիտի բռնեն օսմանեան կառավարութեան բոլոր անդամները, ինչպէս նաեւ անոր գործակալներէն անոնք՝ որ մեղսակից պիտի նկատուէին ջարդերուն մէջ: Ամէն ինչ թուղթի վրայ մնաց...

Նոյնիսկ Նախագահ Ուիլսոնը, 1918-ին յայտարարեց որ «ուշ կամ կանուխ Թուրքիան դատաստանի պիտի բերուի, իր արարքներուն հաշիւ տալու համար»: 25 Յունուար 1919-ին դաշնակից երկիրները 15 անդամներէ բաղկացած յաճախողով մը կազմեցին պատժական դատի կանչելու համար գերմանացի եւ թուրք պատերազմական ոճրագործները: Ո'չ միայն գերմանացիները, այլեւ թուրք ոճրագործները եւս անպատիժ մնացին: Ճիշդ է որ Թալէաթ, Էնվեր, Ճեմալ եւ Տոթթի. Նազըմ մահուան դատապարտուեցան Պոլսոյ մէջ

ՏԱՅԷՇԻ ՎՏԱՆԳԸ ԵՒ ԱՐՅԱԽԻ ՍԱՅՄԱՆՆԵՐԸ

Շարունակուած էջ 5-էն

մէկ օրէն միւսը եւ դէպի կեդրոնական Ասիա իրենց ճանապարհին յայտնուին Ատրպէյճանի մէջ:

Հոս է որ իր աղեղը կը լարէ Արցախը իսլամիստ խմբաւորումներուն համար «նոր դրախտ» մը կերտելու վտանգը:

Այս վտանգին մասին տարբեր առիթներով խօսուած է, բայց նոյն գործընթացներուն դիմաց «զապող» մեքանիզմներու պակաս կը ստացուի:

Խաղ չէ ըսելը, որ Արցախի սահմաններուն «Տահէշ»ի ճիհատականներ յայտնուած են ու անոնք

անգլիացի դատաւորներէ կազմուած զինուորական ատենի մը կողմէ, բայց այդ մահապատժութիւնը չգործադրուեցաւ ինչ-ինչ հաշիւներով:

Ինչպէս վերեւ յիշատակեցինք, դաշնակից տէրութիւններէն ո'չ մէկը պիտի չիշէր այլեւս, թէ պատերազմի սկիզբէն իսկ թուրք կառավարութեան պաշտօնապէս ազդարարած էին որ «անձնապէս պատասխանատու պիտի բռնէին օսմանեան կառավարութեան բոլոր անդամները, ինչպէս նաեւ իրենց մեղսակից գործակալները»: Դաշնակից տէրութեանց թերացումով, թուրքերը անմիջապէս վերսկսան իրենց զանգուածային ոճիրները՝ զինադադարէն հազիւ մէկ-երկու տարի ետք: Բացորոշ է որ քեմալական նոր ցեղասպանութիւնը տեղի չէր ունենար, եթէ Անգլիան եւ Ֆրանսան փոխան ի փոխ չօգնէին թուրքերուն:

Մուսթաֆա Քեմալ, օգտուելով Դաշնակից տէրութեանց թերացումէն, զինուորական ոյժ վերակազմեց եւ ամէն տեղ ըմբոստութեան շաժուներ ստեղծեց եւ շուտով պատուհաս դարձաւ ամողջ տարածաշրջանին մէջ: Ո'չ միայն հայ եւ յոյն ջարդեց, այլ եւ մեծ թիւով Ֆրանսացի զինուորականներ ալ սպաննեց մասնաւորաբար Կիլիկիոյ մէջ (որմէ ետք տեղի ունեցաւ Կիլիկիոյ պարպուածը), իւրացնելով հակալական քանակութեամբ զէնք ու ռազմամթերք, եւ ինքզինք պարտադրեց որպէս Թուրքիոյ կանոնաւոր օրինական իշխանութիւն: Այս բոլորին որպէս հետեւանք, Ֆրանսան կորսնցուց դարերէ ի վեր իր վայելած քաղաքական դիրքն ու վարկը, մասնաւորաբար Միջին Արեւելքի մէջ:

«արդէն անցնող Ապրիլին արցախեան թալիշ գիւղին մէջ բարբարոսութիւններ գործեցին»:

Այս վարկածին առնթեր ու ամէն գնով պէտք է տարբադարել իսլամի գործօնը եւ ամէն առիթի բացատրել, որ Արցախի հարցը կրօնական հարց չէ, այլ էթնիք հարց է եւ Արցախի հերոսական ժողովուրդը կը կռուի իրաւունք ունեցողի եւ պատմութեան սեւ սխալներէն մին սրբագրելու կամքով:

Աւարտին ու վերադառնալով Պաքուի մէջ տեղի ապահովական մարմիններու արձակած «քարոզ-

ԽԵԼԱԳԱՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

Շարունակուած էջ 6-էն

կան հարցերը թուրքերուն համար կարմիր գիծեր են, եւ առաջին անգամ չէ, երեք թրքական կուսակցութիւնները ԱԶԿ, ԺՀԿ եւ Ազգայնական Շարժում Կուսակցութիւնը (ԱՇԿ) կը միանան եւ միասնական կը գործեն վերոնշեալ

տի մէջ: Միշտ միտքերնուն մէջ ունենալով երկրէն գաղթելու Բ. ծրագիրը: Այս վերջին օրերուն հասած յուսահատութիւնը այդ ծրագիրը դրած է շրջանառութեան մէջ:

Լքելու եւ մեկնելու միտքը մարդուն ուղեղին մէջ տեղաւորուելու հետեւանքով, քաղաքակա-



«Սեր ապրած դժոխքը դրախտի վերածելու պահանջատր մարդիկ ենք».

հարցերուն շուրջ: Մէկ այլ կողմէ, արտակարգ իրավիճակի կիրառումով ազատութիւններու սահմանափակման մթնոլորտին մէջ, իրագործուեցան բոլոր այն բռնութիւնները եւ կողոպուտի քաղաքականութիւնները, որ հնարաւոր չէր ընել նախորդ շրջանին հանրային կարծիքի ճնշման տակ: Ժողովրդավարութեան կողոպուտին գուզահեռ, կողոպուտուեցաւ բնութիւնը, ճգնաժամ ապրող Թուրքիոյ պարտուագիւն, օգտուելով արտակարգ իրավիճակի պայմաններէն սկզբու վերստին կազմակերպուիլ: Ընդհանուր իրաւունքներու եւ ազատութիւններու կրճատումին հետ մէկ-տեղ, սենտիքաներուն վրայ ճնշումները աճեցան: Պուրժուզիան եւ անոր առաջին ներկայացուցիչը հանդիսացող էրտոզան՝ աշխատաւորներուն եւ մեր բոլորիս իրաւունքները հարուածելով, մեր ամաններուն մէջի ուտելիքները եւ մեր գրպաններուն մէջի դրամը պակսեցուցին:

ՎԻՃԱԿԸ ՍԵՐ ԹԱՂԻՆ ՄԷՋ

Այս ընթացքէն դուրս, երբ խոշորացող զորքերը «մեր թաղը» կը տեսնենք, որ Թուրքիոյ մէկ հատուածին վրայ ծաւալող վախն ու գաղթելու ցանկութիւնը այստեղ եւս առկայ է: Թուրքիոյ մէջ բոլոր փոքրամասնութիւնները եւ յատկապէս հայերը բոլոր ժամանակաշրջաններուն եղած են վտանգի տակ եւ այդ պատճառով ալ ապրած են մտահոգ եւ սար IMC TV բռնի փակման պահը ուղիղ սփռումի ժամանակ սարսափի մթնոլորտ-

նութեամբ զբաղուելու ցանկութիւնը կը կորսուի, որովհետեւ տիրող վիճակը որ փոխել կը ցանկանալիք կը դառնայ անփոփոխելի եւ անիմաստ: Վերջին 150 տարիներու սպանդները, Յեղասպանութիւնը, մշտական ճնշումը եւ արտագաղթին պատճառած հոգեկան վնասուածքը, Թուրքիոյ մէջ ապրող հայերու հոգիներուն մէջ պակաս չեն մնար: Այս դժուարին պայմաններուն մէջ, որպէս «Նոր Զարթօնք» մեր գործունէութեան օրինական քաղաքական դաշտը շատ նեղացած է, սակայն ի հեճուկս ամենադժուար պայմաններուն մենք կը վերահաստատենք պայքարը շարունակելու մեր ամուր կամքը: Հրանդ Տիրքին խօսքերով. «Մեր ապրած դժոխքը դրախտի վերածելու պահանջատէր մարդիկ ենք».

համացանցերուն վրայ երբ ձեռքաւարութեան ենթակայ գտնուողներուն ցանկերուն մէջ մեր անունները հրապարակին, անկասկած որ այսպիսի ցանկերուն մէջ մեր անուններուն գտնուելը մեզի վախ չի պատճառէր, այլ միայն հարստութեան զգացում կուտայ: Բուն վախկոտները այն իշխանութիւններն են, որոնք ճնշումի, եւ ահ ու սարսափի միջոցով հասարակութիւնը ուղղորդել կը փորձեն: Մենք վստահ ենք, որ վերջաւորութեան անոնք պիտի պարտուին, եւ երկիր մոլորակին վրայ դժոխային կեանք մը ապրեցնելուն հաշիւը պիտի տան եւ դատուին: Իսկ մենք ազատ եւ արդար երկրի մը մէջ եղբայրաբար ապրելու պայքարը պիտի շարունակենք: Փողոց, Պայքար, Ազատութիւն:


չական» ռումբին, պէտք է յստակօրէն դիտարկել, որ Ալիեւ եւ իր շուրջ եղողները կրնան արցախեան սահմանին նոր արկածախնդրութիւն մը «նետել», այս անգամ ուժի մէջ դնելով Տահէշն ու անոր մերձաւորները, աշխարհին այս անգամ յոխորտալու, որ սահմանին վրայ եղած դէպքերը այս անգամ

իր անմիջական վերահսկողութեան դուրս էին:

Այս բոլոր պատճառներով, պէտք է զգօն շարժիլ ու ճիշդ հաշուարկներ կատարել, երբ կը խօսուի իսլամիստ ճիհատականներու մասին, որոնք ամէն առիթի նոր «ճէննէթ» մը կը փնտռեն:

ՎԱՐՉՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով հեռաձայնել՝ (626) 398-0506

ՀՈԳԵՅԱԼԳԻՍ



ՏՕԲԹ. ՎԻԳԻՆ ԿԻԻԼՎԱՐԴԵԱՆ
(Ծննդալ Պէյրուս, Յունիս 1956ին)

Հանգուցեալ Վիգին Կիւլվարդեանի մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, Փետրուար 12, 2017ին, Հայաստանեայց Առաքելական Սբ. Պետրոս եկեղեցու մէջ, 17231 Sherman Way, Van Nuys, CA 91406, յաւարտ Ս. Պատարագի:

Սգակիրներ՝
Կինը՝ Լիւսի Կիւլվարդեան
Զաւակները՝ Նար եւ Լար Կիւլվարդեան
Մայրը՝ Սոնիա Կիւլվարդեան
Քոյրը՝ Մանիա եւ Բապըրթ Արշակունի եւ զաւակը Լիանա
Քրոջ զաւակը Նինա Արշակունի եւ Մաթիու Բըկմայր
Աները եւ զոքանչը՝ Սարգիս եւ Տիմիթրիա Սարգիսեան (Լիբանան)
Քենին՝ Սեդա Սարգիսեան եւ զաւակը Ժան-Փոլ (Լիբանան)
Աներորդին՝ Փոլ եւ Սուհա Սարգիսեան եւ զաւակները Թամար, Սագօ եւ Վահագն (Լիբանան)
Եւ համայն հարազատներն ու բարեկամները:
Հոգեհանգստեան պաշտօնէն ետք հոգեհաշ պիտի մատուցուի նոյն եկեղեցու կից սրահին մէջ:

ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

ԵՂԻՍԱԲԷԹ ՍԻՍԼԵԱՆԻ մահուան տխուր առիթով Նոր Սերունդ Մշակութային Միութեան վարչութիւնն ու անդամները իրենց խորագգաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան համայն պարագաներուն: մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Սահակ եւ Անահիտ Գթըֆեանին:

ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

ԵՂԻՍԱԲԷԹ ՍԻՍԼԵԱՆԻ մահուան տխուր առիթով Ս.Դ.Հ.Կ. «Արսէն Կիտուր» մասնաճիւղի անդամները իրենց խորագգաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան համայն պարագաներուն: մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Սահակ եւ Անահիտ Գթըֆեանին:

ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

ԵՂԻՍԱԲԷԹ ՍԻՍԼԵԱՆԻ մահուան տխուր առիթով Հաճնոյ Հայրենակցական Միութեան վարչութիւնն ու անդամները իրենց խորագգաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան համայն պարագաներուն: մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Սահակ եւ Անահիտ Գթըֆեանին:

ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

ԵՂԻՍԱԲԷԹ ՍԻՍԼԵԱՆԻ մահուան տխուր առիթով Հ.Մ.Մ.ի վարչութիւնն ու անդամները իրենց խորագգաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան համայն պարագաներուն: մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Սահակ եւ Անահիտ Գթըֆեանին:

ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

ԵՂԻՍԱԲԷԹ ՍԻՍԼԵԱՆԻ մահուան տխուր առիթով Հ.Մ.Մ.ի Տիկնանց Օժտանդակ Մարմինը իր խորագգաց վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան համայն պարագաներուն: մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Սահակ եւ Անահիտ Գթըֆեանին:

ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

ՍՈՆԱ ՄԱՆՈՒՇԱԿԵԱՆԻ մահուան տխուր առիթով Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը իր խորագգաց վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի զաւակներուն եւ համայն ընտանեկան պարագաներուն:

ՀԱՅ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԸ ՎԻՐՏՈՒԸՎ ԿԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ԵՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆԻՆ



Շարունակուած էջ 15-էն

ճարտարապետութեան առանձնա- յատկութեան, երբ կառուցուած էր եկեղեցին:

Ինչպէս նշուած է մոտեւորողը, վերտուալ վերականգնած բոլոր պատմամշակութային օբյեկտները (առարկաները) 60-100 տոկոսով նման են բնօրինակին: «Հատուկնտ տարրեր են լինում կամ նրբութիւններ, որոնք մենք չենք կարողանում վերականգնել: Սակայն իւրաքանչիւր դարաշրջան տարբերուած է ճարտարապետութեան բացառիկութեամբ, ինչն էլ օգնում է մեզ աշխատանքի ժամանակ վերականգնել ամենամանր տարրերն ու դրանց ճիշդ նմանակն ստեղծել», ասաց Ֆրանգեանը: Նրա խօսքով, Թուրքիայում բազմիցս փորձեր են արուել իրենց տեսանկիւնից ներկայացնել հայկական պատմամշակութային կոթողները: Դա տարբեր նկատառումներով էր արուում, այդ թւում նաեւ նրա համար, որ ցանկանում էին «վերացնել» հայկական հետքը: Պատասխանելով այն հարցին, թէ արդեօք հնարաւոր է Ֆրանգեանի եւ իր գործընկերների պատրաստի աշխատանքներով յետագայում վերականգնուեն Անիում գտնուող եկեղեցիները կամ քաղաքը, նա պատասխանեց, որ այդ հարցով պէտք է իրաւասու

մարդիկ գբաղուեն: «Մենք պարզապէս պահպանում ենք պատմամշակութային ժառանգութիւնը մեր ձեռով: Անի քաղաքը միջնադարի բարձրագոյն քաղաքակրթութեան խորհրդանիշն է, ինչպէս նաեւ հայ ճարտարապետութեան բնօրրանը: Այդ քաղաքը եղել է եկեղեցիների մայրաքաղաք, պատահական չեն ասում, որ «Անին 1001 եկեղեցիների քաղաք է»: Ի հարկէ, սա չափազանցուած է, քանի որ քաղաքում կայ շուրջ 50 եկեղեցի», ասաց տիգայները:

Ֆրանգեանը նաեւ յաւելեց, որ աշխատանքի ընթացքում ամենատպաւորիչն այն է, երբ որեւէ նորութիւն ես գտնում այս կամ այն շէնքի, կառուցի ու շինութեան հետ կապուած: Երբեմն նաեւ զեղարուեստական գրականութիւն են ընթերցում եւ ուրախանում, եթէ կարելոր ու նոր որեւէ տեղեկութիւն են գտնում:

Ներկայ պահին հայ մասնագէտները 3D ձեւաչափում վերականգնել են Պարոնի պալատը: Սա պայմանական անուանում է, քանի որ յայտնի չէ, թէ ում է պատկանում Անիում գտնուող այդ լուրջ ճարտարապետական յուշարձանը: Ֆրանգեանի խօսքով՝ դա բնակելի դրեակ է, որը տարբերուած է իր հարուստ զարդանախշերով եւ ճոխ շքամուտքով:



Հ.Մ.Մ.ի ՖՈՒԹՊՈՒԼԻ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒ ՅԱՅՏԱԳԻՐԸ
TEAM HOMENMEN 1- TOURNAMENT GAME
HOMENMEN VS DINAMO INTERNAZIONALE
SUNDAY FEBRUARY 12, 2017 1:30PM
SEPULVEDA BASIN
6201 Balboa Blvd, Van Nuys, CA 91406
TEAM HOMENMEN 2 - LEAGUE GAME
SUNDAY FEBRUARY 12, 2017 9:PM
HOMENMEN VS UNITED FC.
VILLA PARKE EAST, PASADENA

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

«ԴՈՒՔ ՏԵՍՆՈՒՄ ԷՔ ԱՅՆ ՀՐԱՇՔԸ, ՈՐ ԿԵՐՏՈՒՄ Է ՄԻՒԹԱՐԵԱՆԸ ԽԱՂԱԴԱՇՏՈՒՄ»։ ՄՈՒՐԻՆԻՕ



Անգլիական «Մանչեսթեր Շուտաթեր»-ի գլխավոր մարզիչ Ժոզե Մուրինյոն անդրադարձել է Հենրիխ Մխիթարեանի ցուցադրած խաղային որակներին «Լեսթեր Սիթի»-ի դեմ խաղում:

«Պատահում է այնպես, որ ֆուտպոլիստներին պաշտպանելու համար կարիք է լինում նրանց խաղադաշտ չհանել: Միկին այդպիսի ֆուտպոլիստ է: Դուք տեսնում էք այն հրաշքը, որ կերտում է Մխիթարեանը խաղադաշտում, ես տեսնում եմ աւելին: Միկին իսկապես շատ լաւ է խաղում», «Արմենայրեն»-ի հաղորդմամբ՝ ասել է Մուրինյոն:

«Մանչեսթեր Շուտաթեր»-ի ու Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը Goal.com-ի վարկածով ընդգրկուել է ֆուտպոլի Անգլիայի առաջնութեան 24-րդ տուրի խորհրդանշական հաւաքականում:

«Մխիթարեանը դարձաւ կոլի ու կոլային փոխանցման հեղինակ, իսկ երկրորդ խաղակէստում ոչ ոք չստեղծեց նրանից շատ կոլային պահ», - գրում է հեղինակաւոր կայքը:

Յիշեցնենք, որ նախօրէին «Մանչեսթեր Շուտաթեր» 3:0 հաշուով յաղթել էր Անգլիայի գործող ախոյեան «Լեսթերին», իսկ Հենրիխ Մխիթարեանը դարձել էր կոլի ու կոլային փոխանցման հեղինակ՝ մեկնարկային կազմում հանդէս գալով առանց փոխարինման:

ՈՒԵՖԱ-Ն ԳՈՒՄԱՐՆԵՐ Է ՏՐԱՍԱԴՐՈՒՄ ՀԱՅՎԱԿԱՆ ԱՎՈՒՄԲԵՐՈՒՆ

Ֆուտպոլի եւրոպական ֆեդերացիաների միութիւնը հրապարակել է բոլոր այն ակումբների ցանկը, որոնք ֆուտպոլիստներ են տրամադրել ազգային հաւաքականներին՝ Եւրօ-2016-ի առաջնութեան ընտրական եւ եզրափակիչ փուլերի խաղերին մասնակցելու համար: Դրանք թուով 641-ն են:

ՈւեֆԱ-ի նոր կանոնակարգով այդ ակումբները իւրաքանչիւր ֆուտպոլիստի համար գումարներ են ստանում: Այդ եղանակով բոլորից շատ գումար վաստակել է իտալական «Շուտաթեր»՝ 63,5 մլն եւրօ: Ապա յաջորդում են անգլիական «Լիվերպոլը» ու «Տոտենհեմը»՝ 3-ական միլիոն:

Հայաստանի ակումբները ընդհանուր առմամբ ՈւեֆԱ-ից կը ստանան 364.731 եւրօ: Այս գումարը բաշխուել է 7 ակումբների միջեւ.

- «Փիւնիկ»՝ 236.003
- «Միկա»՝ 55.782
- «Ալաշկերտ»՝ 34.327
- «Ուլիս»՝ 21.454
- «Արարատ»՝ 8.581
- «Բանանց»՝ 4.290
- «Գանձասար-Կապան»՝ 4.290

Ի դէպ, Հայաստանի հաւաքականում որքան շատ են ընդգրկուել արտասահմանեան թիմերում հանդէս եկող ֆուտպոլիստներ, այնքան մեր ակումբները քիչ գումարներ են վաստակում: Զարմանալի չէ, որ Անդորայի ակումբներն աւելի շատ գումար են վաստակել (564.859) Եւրօ-2016-ի հաշուին, քան՝ մերոնք:

Յիշեցնենք, որ «Միկա» եւ «Ուլիս» ակումբներն անցած տարուայ ամրանից կազմալուծուել են եւ այլեւս չեն գործում:

ՅՐԵՆԿ ԼԵՄՊԱՐԴՆ ԱՒԱՐՏԵՑ ԿԱՐԻԵՐԱՆ

Անգլիայի հաւաքականի եւ Լոնտոնի «Չելսի» նախկին կիսապաշտպան Յրենկ Լեմպարդն աւարտել է կարիերան: Այդ մասին 38-ամյա ֆուտպոլիստը գրել է Instagram-ում:



Լեմպարդն անգլիական «Վեստ Բրոմվիչի» ակադեմիայի սան է: Կիսապաշտպանը խաղացել է նաեւ «Մանչեսթեր Սիթիում» եւ ամերիկեան «Նիւ Եորք Սիթիում», որը նրա վերջին ակումբն էր:

Կարիերայի մեծ մասն անգլիացին անցկացրել է «Չելսիում», որի կազմում 2001-2014-ը մասնակցել է 626 հանդիպման եւ դարձել 208 կոլի ու 150 կոլային փոխանցման հեղինակ: Լոնտոնեան ակումբի հետ նա 3 անգամ դարձել է Անգլիայի ախոյեան, 4 անգամ՝ Անգլիայի գաւաթակիր, 2 անգամ՝ Անգլիական լիգայի յաղթող ու երկրի սուպերգաւաթակիր: Նա յաղթել է նաեւ Ախոյեանների լիգայում ու Եւրոպայի լիգայում:

ԿԱՄԵՐՈՒՆԸ 15 ՏԱՐԻ ԱՆՑ՝ ԱՓՐԻԿԵԻ ԱՒՈՅԵԱՆ



Ֆուտպոլի Կամերունի հաւաքականը նուաճեց Գաբոնում աւարտուած Ափրիկէի ազգերի գաւաթի խաղարկութեան յաղթողի կոչումը: Լիբերիլում տեղի ունեցած եզրափակիչում բելգիացի Ուգօ Բրոսսի գլխավորած թիմը տարաւ կամային յաղթանակ՝ 2:1:

Եգիպտոսի հաւաքականն արժենթինացի էկտոր Կուպերի գլխավորութեամբ առաջինը հասաւ յաջողութեան: 22-րդ րոպէին աչքի ընկաւ կիսապաշտպան Մոհամեդ էլ Նենին, սակայն երկրորդ խաղակէստում կամերունցիները պաշտպան Նիկոլիա Նիուուի եւ յարձակուող Վեսսան Աբուբարի գոլերի շնորհիւ առաջ անցան հաշուի մէջ:

Կամերունը 15 տարի անց վերադարձրեց Ափրիկէի ուժեղագոյնի կոչումը՝ դառնալով հնգակի ախոյեան:

Գաբոնում աւարտուած Աֆրիկէի ազգերի գաւաթի խաղարկութեան լաւագոյն ֆուտպոլիստ է ճանաչուել Կամերունի հաւաքականի յարձակուող Կրիստիան Բասոգոզը:

ԵՈՒՐԳԵՆ ԿԼՈՊԸ ԲՂԱԲԵԼ Է «ԼԻԲԵՐՊՈՒԼԻ» ՖՈՒՏՊՈՒԼԻՍՏՆԵՐԻ ՎՐԱՅ

«Լիվերպոլի» գլխավոր մարզիչ Եուրգեն Կլոպը գայրացել է «Հալ Սիթի» դէմ Պրեմիեր լիգայի 24-րդ տուրի հանդիպման ժամանակ:



The Times-ի համաձայն՝ խաղի ընդմիջմանը գերմանացի մասնագէտը բղաւել է իր խաղացողների վրայ եւ պահանջել փոխել խաղի հանդէպ վերաբերմունքը: Առաջին խաղակէսից յետոյ լիվերպոլցիները պարտուել էին 0:1 հաշուով, իսկ ընդմիջմից յետոյ չկարողացան կոլ խփել եւ բաց թողեցին եւս մէկ գնդակ:

Յիշեցնենք, որ Եուրգեն Կլոպի թիմը բոլոր մրցաշարերում չյաղթեց 5-րդ խաղում անընդմէջ (կրելով 4-րդ պարտութիւնը): Պրեմիեր լիգայում «Լիվերպոլը» չի յաղթում արդէն 5-րդ տուրն անընդմէջ:

ՈՒՍԵՅՆ ԲՈԼԹԸ ՀՐԱԺԱՐՈՒԵԼ Է ՄԵԿՆԱՐԿ ԴՈՒՐՍ ԳԱԼ 2018-ԻՆ

8-ակի օլիմպիական ախոյեան, 100 մեթր (9,58 վայրկեան) եւ 200 մեթր (19,19) վազքի աշխարհի ռեկորդակիր Ուսեյն Բոլթը մերժել է Բրիտանական համագործակցութեան խաղերի կազմկոմիտէին եւ հրաժարուել է 2018-ին մասնակցել այդ մրցմանը:



«2018-ին մեկնարկ դուրս գալու եւ յաղթելու համար ես պէտք է մարզուեմ աւելի շատ, քան երբեւէ արել եմ: Դա տեղի չի ունենայ», - 30-ամյա Բոլթի խօսքը մէջբերում է dailymail-ը:

Զամայկացի արագավազորդի վերջին մեկնարկը կարիերայում կը լինի 2017թ. Օգոստոսի 5-ից 13-ը Լոնտոնում կայանալիք աշխարհի առաջնութիւնը:

Յիշեցնենք, որ Յունուարի 25-ին ՄՕԿ-ը գրկեց Զամայկայի հաւաքականին 2008թ. Պեկինի Օլիմպիական խաղերի 4 անգամ 100 մեթր փոխանցումավազքի ոսկի մետալից Նեստա Կարտերի դրական դոպինգ թեստի պատճառով: Այդ պատճառով Բոլթը վերադարձրել է իր 9 օլիմպիական ոսկէ մեդալներից մէկը:

ԵՐՈՊԱՅՈՒՄ «ԲԱՐՍԵԼՈՆԱՆ» ԱՌԱՋԻՆ ԽՓԵՑ 100 ԿՈԼ

«Բարսելոնան», Սպանիայի առաջնութեան 21-րդ տուրում 3:0 հաշուով յաղթելով Բիլբաոյի «Աթլետիկին», ընթացիկ մրցաշրջանում բոլոր մրցաշարերում խփած կոլերի քանակը հասցրել է 100-ի:

Եւրոպայում կատարական ակումբն առաջինն է հատում 100 կոլի սահմանագիծը: Այդ ցուցանիշով «Բարսելոնային» 2 գոլ գիջում է Մադրիդի «Ռեալը», իսկ «Մոնակոն» Ֆրանսայի առաջնութեան 23-րդ տուրում 3:0 հաշուով յաղթեց «Նիցային» եւ նոյնպէս գոլերի քանակը հասցրեց 100-ի: